13 ՓԵՏՐՈՒԱՐ 1999 ՇԱԲԱԹ # 25 (1770)

# Azg Ազգ

## ՀՈՍԿ 9-րդ (արտահերթ) ոչգամավորական ժողովը՝ այսօր

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության 9-րդ (արտահերթ) հանրապետական ոչգամավորական ժողովը կկայանա այսօր, ժամը 12:00-ին Թեքեյան կենտրոնի (Խանջյան 50) դահլիճում: Ինչպես տեղեկանում ենք կուսակցության Հանրապետական վարչության հաղորդագրությունից, ոչգամավորական ժողովի օրակարգում նախատեսվում են կազմակերպական եւ ներկուսակցական կյանքի հետ կապված հարցեր, ՀՈՍԿ կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկների քննարկում, ինչպես նաեւ ՀՀ Ազգային ժողովի առաջիկա ընտրություններին նախապատրաստվելու խնդիրը:

Լրագրողների մուտքն ազատ է:

Պատգամավորների գրանցումը՝ ժամը 11-ից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

# Հանրապետության նախագահը ձիով քայլ է կատարում

*Հրամանագիր՝ անցած սեփականաշնորհման օրինականությունը ստուգելու*

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Հինգշաբթի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրավիրել է Ազ խոսնակ խորհրդ Հարությունյանին՝ քննարկելու իր նոր հրամանագիրը, որով նախատեսվում է ստեղծել ՀՀ նախագահին առընթեր խորհրդակցական հանձնաժողով՝ զբաղվելու սեփականաշնորհման անցած գործընթացի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը եւ ստուգելու Արմենտել համատեր - ձեռնարկության ստեղծման, ինչպես նաեւ ֆինանսական գործունեության օրինականությունը: Նախագահին առընթեր այս հանձնաժողովի կազմում ընդգրկվելու են եւ գործադիր, եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ:

Ազ խոսնակ Խորհրդ Հարությունյանը երեկ խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո «Ազգին» ներկայացրեց այս հանձնաժողովի կազմում ընդգրկվող անձանց՝ արդարադատության, փոստի եւ հեռահաղորդակցության, ֆինանսների եւ էկոնոմիկայի, ՆԳ եւ ԱԱ նախարարություններ, դատախազություն եւ հանրապետության նախագահին առընթեր վերահսկողական ծառայություն: Ազգային ժողովին հայտնվում է երեք տեղ՝ մեկը խորհրդարանական մեծամասնության կողմից (իմա՝ «երկրապահի» եւ «Բարեփոխումների») եւ երկուսը՝ ընդդիմադիր փոքրամասնության: Բազմաբերս փոքրամասնությունն ինքը պետք է կոչվի՝ թե խորհրդարանական ուժերին է վստահում պաշտպանել օրինականությունը նախագահին առընթեր այս հանձնաժողովում: Հանձնաժողովը կգործի երկամսյա ժամկետում, եւ նրա գործունեության արդյունքում կծնվի տեղեկանք, որը կհանձնվի հանրապետության նախագահի ու Ազ դատին: «Ազգի» այն հարցին, թե ո՞վ է որոշելու 93 թ.-ից առ այսօր իրականացված սեփականաշնորհման որ գործարքը պետք է ստուգվի, Ազ խոսնակը պարզաբանեց. «Նշված ծեսերման գործընթացներում ստորագրվող օբյեկտների թիվը կարող է որոշել հանձնաժողովը, որպեսզի չլինեն տարածայնություններ, նախատեսվում է, որ ցանկացած երեք անդամ իրավունք կունենան առաջարկություն մտցնել ստուգման օբյեկտի վերաբերյալ, եւ այս պարագայում առաջարկությունը պետք է ընդունվի առանց քննարկման»:

Ցես ► էջ 2

ՄԻՆՍԿԻ ԽՈՒՄԲ

## Համանախագահները վաղը կհավաքվեն Վիեննայում

ԲԱՔՈՒ, 12 ՀՈՒՆՎԱՐ, ՄՆԱՐՔ: Փետրվարի 14-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի (Ֆրանսիա, Ռուսաստան եւ ԱՄՆ) համանախագահները կհավաքվեն Վիեննայում: Նրանք կքննարկեն ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված առաջարկությունների մշակման կապակցությամբ համանախագահների հետագա գործողությունները, հաղորդել է արտաքին քաղաքականության հարցերով պետխորհրդական Վաֆա Գուլուզադեն: Նրա խոսքերով, համանախագահները Վիեննայից կմեկնեն Օսլո, որտեղ ԵԱՀԿ գործող նախագահ, Նորվեգիայի ԱԳՆ ղեկավարին կտեղեկացնեն իրենց հետագա պլանների մասին: Հենց այնտեղ էլ կորոշվի հակամարտության գոտի համանախագահների այցի ժամկետը:

Այն հարցին, թե սպասվո՞ւմ են արդյոք նոր առաջարկություններ համանախագահներից, պետխորհրդականը պատասխանել է, որ Քաղուն մերժել է «ընդհանուր պետության» գաղափարը, եւ այն «մեռել է»: Քաղուն կմերժի բոլոր այն առաջարկները, որոնք հակասում են Ադրբեջանի ազգային շահերին, ասել է Գուլուզադեն:

Պետխորհրդականը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրը ԵԱՀԿ-ից ՄԱԿ փոխադրելը ներկայումս չէր համապատասխանի Ադրբեջանի շահերին:

## Թուրքիան քննարկում է Ադրբեջանի հետ ռազմական պայմանագիր կնքելու հնարավորությունը

ԲԱՔՈՒ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը փետրվարի 11-ին հայտարարել է, որ վերջերս Թուրքիայում իր այցի ժամանակ քննարկվել է Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ ռազմական դաշինքի կնքման հնարավորությունը, այն նպաստակ է հետապնդում դիմակայել Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ, որը Ադրբեջանի «համար մեկ» թշնամին է:

Աբիեւը Հայաստանին մեղադրել է նաեւ այն հարցում, որ ավելի քան 650 քուրդ ահաբեկիչներ զինվորական պատրաստություն են անցնում Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում՝ Թուրքիա ներթափանցելու եւ այս երկրում իրադրության աղակայունացմանն ուղղված գործողություններ իրականացնելու նպատակով:

## Կոնգրեսականները դեմ են կասպյան նավթաբիզնեսում ներգրավված ընկերությունների ֆինանսավորմանը

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի անդամներ Ջո Նոլենբերգը, Նենսի Պելոզին եւ Նիտա Լոին դեմ են հանդես եկել կասպիական նավթաբիզնեսում ընդգրկված ընկերություններին կառավարական օգնություն տրամադրելու էլինքոնյան վարչակազմի մտադրությանը:

Ներկայացուցիչների պալատի միջազգային գործառնությունների ենթահանձնաժողովի լսումներում կոնգրեսականներ Նոլենբերգը, Պելոզին եւ Լոին կասկած են հայտնել կասպիական նավթային նախագծերի մեջ ամերիկյան հարկատուների միջոցները ներդնելու նպատակահարմարության կապակցությամբ, ընդսմին նշելով Կասպիական ավազանում սեւ ոսկու առեւտրային խոշոր պաշարների առկայության որեւէ վկայության բացակայությունը: Ներկայումս Ղազախստանում եւ Ադրբեջանում արդյունահանվող նավթի ծավալները հայտնի էին դեռեւս խորհրդային ժամանակներում, եւ ոչ մի հավաստի տվյալ չկա սեւ ոսկու նոր պաշարների մասին, ասել են ամերիկացի օրենսդիրները, ընդսմին նշելով, որ Pennzoil-ն արդեն հայտարարել է ադրբեջանական նավթային կոնսորցիումից դուրս գալու մասին:

Կոնգրեսական լսումներին մասնակցում էին նաեւ OPIC, TDA (առեւտրի եւ զարգացման գործակալության) եւ Export-Import Bank (էքսիմբանկի) ղեկավարներ:

## Ավանի թաղամասը որոշել է երկարաձգել հանգստանալ ԱՄՆ-ում

Ավանի թաղամաս Ռուբեն Հայրապետյանի (հայտնի է Նեմեց մականունով) մասին «որոշ լրատվամիջոցների վերահաղորդման հասնող ջղաձիգ վերլուծություններին պաշտոնապես պատասխանելու էր եկել Ավանի թաղամասի տեղակալ Միխայել Մարգումյանը: Երեկ նա Արմենպրեսի մամուլի սրահ ներկայացավ 4 կետից կազմված պատրաստի հայտարարությամբ, որ ասվում էր, որ թաղամասը հերթական արձակուրդում է 99 թ. հունվարի 12-ից: Նույն օրն էլ տիկնոջ հետ մեկնել է ԱՄՆ՝ վերջինիս բուժման եւ ԱՄՆ-ում բուժվող ընկերոջն այցելելու նպատակով: Թաղամասի տիկինը նույնպես վիրահատվել է այնտեղ եւ «վերջինիս լիարժեք առաջինմամբ էլ պայմանավորված կլինի Ռուբեն Հայրապետյանի վերադառնալու ժամանակը»:

Այն հարցին, թե մեկնումյա արձակուրդը երեկ արդեն լրացավ, ո՞վ է փոխարինելու թաղամասին, պրն Մարգումյանը հավելեց, որ Ռ. Հայրապետյանը չէր օգտվել նաեւ իր 96-97, 97-98 թթ.-ի հերթական արձակուրդներից, եւ եւս երկու ամիս նա կարող է բացակայել:

Ս. Պ.

## «Քլինթոնի գործի» դատաքննությունը մոտենում է ավարտին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 12-ին ամերիկյան Սենատում տեղի կունենա քվեարկություն, որի արդյունքների համաձայն էլ կվճռվի այն հարցը, թե արդյոք ամերիկյան նախագահը կգրկվի՞ իշխանությունից, թե՞ կմնա իր պաշտոնում: Բիլ Քլինթոնի պաշտոնաթակության համար անհրաժեշտ է, որպեսզի հավաքելը գործնականորեն անհնար է: Դա պարզ դարձավ, երբ հանրապետական չորս սենատորներ հայտարարեցին, որ քվեարկելու են այն երկու հոդվածների դեմ, ըստ որոնց մեղադրվում է Քլինթոնը: Մեղադրանքի առաջին կետը երդմամբ կեղծ ցուցմունքներ տալն է, երկրորդը՝ խոչընդոտներ հարուցել արդարադատությանը: Դեմ են մտադիր քվեարկել նաեւ բոլոր դեմոկրատ սենատորները: Սպասվում է, որ քվեարկության արդյունքների հրապարակումից հետո Սենատում ելույթ կունենա նախագահ Բիլ Քլինթոնը: Նա իր գնահատականը կտա սենատական դատաքննության արդյունքներին, ինչպես նաեւ կոչմամբ իր հետագա ծրագրերի մասին:

## Միխայիլ Կասիանովը՝ Ռուսաստանի գլխավոր դատախազի պաշտոնի թեկնածու

ՍՈՉԻ, 12 ՀՈՒՆՎԱՐ, ՍՆԱՐՔ: Ռուսաստանի նախագահի աշխատակազմի աղբյուրից ստացված տեղեկությունների համաձայն, Բորիս Ելցինի եւ Նիկոլայ Բորդյուժայի միջեւ օրերս կրեմլում կայացած զրույցի ընթացքում որոշում է կայացվել Դաշնության խորհրդի առաջիկա նիստում Ռուսաստանի գլխավոր դատախազի պաշտոնի համար թեկնածություններ ներկայացնելու մասին: Աղբյուրը նշել է, որ այդ պաշտոնի հավակնորդների թվում կլինի գլխավոր դատախազի առաջին տեղակալ Միխայիլ Կասիանովը, որի աշխատանքը, Նիկոլայ Բորդյուժայի ասելով, գոհացնում է նախագահին:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## Ընտրական օրենսգիրքը նախագահը կվերադարձնի Ազ

*Օրենսգրքի բարեփոխման հեռանկար*

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը սկսել է հանդիպումներ քաղաքական ուժերի հետ, որ առաջնային քննարկման է ենթարկվում Ազ-ում երրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունված «Երկրապահ» պատգամավորական խմբի «Ընտրական օրենսգրքի» տարբերակը: Քաղաքական ուժերը ողնդում են, որ նախագահն առայժմ ձեռնպահ է ընտրական օրենսգիրքը ստորագրելուց եւ նրան օրենքի ուժ տալուց: ՀՅԴ-ն, ԻՄ-ը եւ մի շարք այլ ոչ խորհրդարանական քաղաքական կուսակցություններ, որոնք անցած նախագահական արտահերթ ընտրություններում սատարել են Ռոբերտ Քոչարյանին, հայտնում են, որ Ռոբերտ Քոչարյանը պատրաստվում է օրենքը վերադարձնել Ազ առաջարկելով այնտեղ կատարել մի շարք բարենորոգչական առաջարկներ: Ըստ ամենայնի՝ նախագահը կառաջարկի Ազ-ին փոխել ընտրական օրենսգրքի այն հոդվածը, որը հնարավորություն է տալիս համայնքապետերին եւ քաղաքապետերին մեծամասնական ընտրակարգով առաջադրվել Ազ պատգամավոր: Այս հոդվածը հատկապես բուռն դժգոհություն է առաջացրել ՀՅԴ կուսակցության մեջ: ԻՄ-ը շարունակում է պնդել մեծամասնական եւ համամասնական հարաբերակցությունը փոփոխելու անհրաժեշտությունը: Պարույր Հայրիկյանի փոխզիջման եզրը մեծամասնական եւ համամասնական ընտրակարգով պատգամավորական մանդատների թվերի հավասարեցումն է՝ 65-66: Կուսակցություններն առաջարկում են Ռոբերտ Քոչարյանին անդրադառնալ նաեւ հանձնաժողովների կազմության սկզբունքին՝ նվազեցնելով կառավարությանը հատկացված երեք տեղերը:

Ընտրական օրենսգրքի քվեարկությունը բոյկոտած «Հայրենիք» պատգամավորական խմբի ներկայացուցիչ Սոս Գիմիշյանը նախագահի այս հնարավոր քայլը շատ բարձր գնահատեց. «Մենք միայն կողջունենք նման լուրջ դրական քայլը նախագահի կողմից, եւ նույնիսկ կարող ենք իրար լավ վերաբերվել: Եթե կա ցանկություն իրար լսելու եւ փոխզիջումների գնալու, դա պետք է ողջունել»:

Ն. Դ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# ՈՒՇԱԳԻՐ

*Սկիզբը էջ 1*

## Ամ-ն խաղից դուրս

Ամ խոսնակը պատգամավորական խումբ-խմբակցությունների ներկայացուցիչներին Ռոբերտ Քոչարյանի այս հրամանագրի բովանդակությունը ծանուցելով՝ առաջարկեց արագ կողմնորոշվել: Կոմկուսի անունից Սերգեյ Բաղալյանն արձագանքեց. «Կարեւորն այն է, որ գործը կատարվի»: Կոմունիստները հեռատեսորեն ընդգծեցին՝ եթե Ամ-ն մերժի առաջարկը, ապա կհայտնվի ավելի հիմար վիճակում: Պարույր Հայրիկյանը (ԻՄ), Արմեն Մարտիրոսյանը («Բարեփոխումներ») եւ Ջուլիետ Կաժոյանը («Շամիրամ») արդար խոստովանեցին. «Հանրապետության նախագահը մեր ծախողած նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը», եւ միայն ԱԺՄ-ն Շավարշ Քոչարյանն ու Արշակ Սադոյանն էին զգուշավոր. «Հրամանագիրը կարող է օգտագործվել, որպեսզի Ամ տեսադաշտից հանվի սեփականաշնորհման գործարքների օրինականության բացահայտման հարցը»:

Հիշեցնենք՝ Ամ-ն Արմենտելի հիմնադրման եւ նրա գործունեության օրինականությունը սուգող ժամանակավոր հանձնաժողովի առաջարկը ծախողվեց, քանզի 117 ներկա պատգամավորներից քվեարկությանը մասնակցեցին ընդամենը 91-ը: Քվորում չապահովվեց, ու թեեւ հանձնաժողովի ստեղծման միակ դեմը Ամ խոսնակ Խոսրով Հարությունյանն էր, նախաձեռնությունը տապալվեց: Ժողովրդական իմաստնությունը պնդում է՝ տաբած ֆարը գետնին չի մնում: Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ապացուցեց, որ տաբած ֆարի արժեք ունեցող նախաձեռնությունները հատկապես նախընտրական շրջանում ինքը չի կարող գետնին թողնել:

«Ազգն» առաջարկեց Ամ փոխխոսնակ եւ խորհրդարանական մեծամասնության՝ «Երկրապահի» ղեկավար Ալբերտ Բազեյանին մեկնաբանել, թե ինչու հատկապես իրենց խմբի անդամները չմասնակցեցին քվեարկությանը: Ալբերտ Բազեյանը նախ պատճառաբանեց օրը. փետրվարի 11-ին դիտավորյալ սպանության զոհ դարձած ՆԳ եւ ԱԱ փոխնախարար, ներքին զորքերի հրամանատար եւ իրենց մարտական ընկեր Արծրուն Մարգարյանի հուղարկավորությունն էր, եւ երկրապահների մեծ մասը բացակայել է Ամ-ից այս հարգելի պատճառաբանությամբ: Եվ երկրորդ. «Նախընտրական փուլում որքանո՞վ են օբյեկտիվորեն աշխատելու բացահայտել, լուրջ ուսումնասիրություն կատարել, եւ արդյոք այդ հանձնաժողովը լիարժեք կկատարեր իր գործառույթները... Դուք ձեզ հարց չե՞ք տալիս, թե ինչո՞ւ հենց այս պահին են հարց բարձրացնում, հարցեր, առանց նախապատրաստման: Մարդկանց ամբիոն է պետք քաղաքականացված հայտարարություններ կատարելու: Մենք համոզված ենք, որ զուտ ամբոխավարությամբ եւ պոպուլիզմով պետք չէր գալ Ամ եւ փորձել այդպես աշխատել: Հարցը շահարկվում է, թե մենք դեմ ենք: Բայց մենք շահագրգռված ենք պարզելու՝ 94 թ., երբ դեռ ծանր մարտական գործողություններ էին ընթանում, պատերազմը չէր ավարտվել, ովքե՞ր էին այստեղ գործընթացներ սկսում՝ սեփականաշնորհելու, եկամուտներ ստանալու մեր ընդհանուր համաժողովրդական ունեցվածքից: Չէ՞ որ դրանց ընդամենը մի փոքրիկ մասնիկը բավական էր պատերազմում տուժած բոլոր քաղաքացիների բոլոր խնդիրները լուծելու համար», եզրափակեց Ալբերտ Բազեյանը:

Խոսրով Հարությունյանը դիվանագիտորեն մեկնաբանեց. «Նախագահն էլ մտահոգ է եւ հասկանում է, որ խնդիրը քաղաքական, սոցիալական հնչեղություն ունի: Եվ եթե Ամ-ին չհաջողվեց հանձնաժողով ստեղծել, ապա ինքը, ոչ պակաս շահագրգռված լինելով այս հարցերում, պարզաբանումներ կատարելու եւ սեփականաշնորհման անցած գործընթացի վրա լույս սփռելու համար ստեղծում է իրեն առընթեր խորհրդակցական մարմին»: Նախագահի հանձնաժողովը գործելու է երկու ամիս, այսինքն՝ գրեթե այնքան, որքան գործելու է այս խորհրդարանը եւ նախընտրական շրջանում աշխարհացունց բացահայտումներ կատարելու լիարժեք հնարավորություն է ստեղծվում, իսկ որոշ՝ հատկապես ընդդիմադիր ուժերի ձեռքից հոեսորական հարցադումներ կատարելու զենքը խլում: Եթե Ամ փորձամասնությունը հրաժարվի գործուղել իր ներկայացուցիչներին այս հանձնաժողով, ապա Ամ-ն իրոք դուրս կմնա խաղից. առայժմ նա տուգանային հրապարակում է:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

# Հանրապետության նախագահը ձիով քայլ է կատարում

*Հրամանագիր՝ անցած սեփականաշնորհման օրինականությունը ստուգելու*

գանեց. «Կարեւորն այն է, որ գործը կատարվի»: Կոմունիստները հեռատեսորեն ընդգծեցին՝ եթե Ամ-ն մերժի առաջարկը, ապա կհայտնվի ավելի հիմար վիճակում: Պարույր Հայրիկյանը (ԻՄ), Արմեն Մարտիրոսյանը («Բարեփոխումներ») եւ Ջուլիետ Կաժոյանը («Շամիրամ») արդար խոստովանեցին. «Հանրապետության նախագահը մեր ծախողած նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը», եւ միայն ԱԺՄ-ն Շավարշ Քոչարյանն ու Արշակ Սադոյանն էին զգուշավոր. «Հրամանագիրը կարող է օգտագործվել, որպեսզի Ամ տեսադաշտից հանվի սեփականաշնորհման գործարքների օրինականության բացահայտման հարցը»:

Հիշեցնենք՝ Ամ-ն Արմենտելի հիմնադրման եւ նրա գործունեության օրինականությունը ստուգող ժամանակավոր հանձնաժողովի առաջարկը ծախողվեց, քանզի 117 ներկա պատգամավորներից քվեարկությանը մասնակցեցին ընդամենը 91-ը: Քվորում չապահովվեց, ու թեեւ հանձնաժողովի ստեղծման միակ դեմը Ամ խոսնակ Խոսրով Հարությունյանն էր, նախաձեռնությունը տապալվեց: Ժողովրդական իմաստնությունը պնդում է՝ տաբած ֆարը գետնին չի մնում: Նախագահ Ռոբերտ Քոչարյանն ապացուցեց, որ տաբած ֆարի արժեք ունեցող նախաձեռնությունները հատկապես նախընտրական շրջանում ինքը չի կարող գետնին թողնել:

«Ազգն» առաջարկեց Ամ փոխխոսնակ եւ խորհրդարանական մեծամասնության՝ «Երկրապահի» ղեկավար Ալբերտ Բազեյանին մեկնաբանել, թե ինչու հատկապես իրենց խմբի անդամները չմասնակցեցին քվեարկությանը: Ալբերտ Բազեյանը նախ պատճառաբանեց օրը. փետրվարի 11-ին դիտավորյալ սպանության զոհ դարձած ՆԳ եւ ԱԱ փոխնախարար, ներքին զորքերի հրամանատար եւ իրենց մարտական ընկեր Արծրուն Մարգարյանի հուղարկավորությունն էր, եւ երկրապահների մեծ մասը բացակայել է Ամ-ից այս հարգելի պատճառաբանությամբ: Եվ երկրորդ. «Նախընտրական փուլում որքանո՞վ են օբյեկտիվորեն աշխատելու բացահայտել, լուրջ ուսումնասիրություն կատարել, եւ արդյոք այդ հանձնաժողովը լիարժեք կկատարեր իր գործառույթները... Դուք ձեզ հարց չե՞ք տալիս, թե ինչո՞ւ հենց այս պահին են հարց բարձրացնում, հարցեր, առանց նախապատրաստման: Մարդկանց ամբիոն է պետք քաղաքականացված հայտարարություններ կատարելու: Մենք համոզված ենք, որ զուտ ամբոխավարությամբ եւ պոպուլիզմով պետք չէր գալ Ամ եւ փորձել այդպես աշխատել: Հարցը շահարկվում է, թե մենք դեմ ենք: Բայց մենք շահագրգռված ենք պարզելու՝ 94 թ., երբ դեռ ծանր մարտական գործողություններ էին ընթանում, պատերազմը չէր ավարտվել, ովքե՞ր էին այստեղ գործընթացներ սկսում՝ սեփականաշնորհելու, եկամուտներ ստանալու մեր ընդհանուր համաժողովրդական ունեցվածքից: Չէ՞ որ դրանց ընդամենը մի փոքրիկ մասնիկը բավական էր պատերազմում տուժած բոլոր քաղաքացիների բոլոր խնդիրները լուծելու համար», եզրափակեց Ալբերտ Բազեյանը:

Խոսրով Հարությունյանը դիվանագիտորեն մեկնաբանեց. «Նախագահն էլ մտահոգ է եւ հասկանում է, որ խնդիրը քաղաքական, սոցիալական հնչեղություն ունի: Եվ եթե Ամ-ին չհաջողվեց հանձնաժողով ստեղծել, ապա ինքը, ոչ պակաս շահագրգռված լինելով այս հարցերում, պարզաբանումներ կատարելու եւ սեփականաշնորհման անցած գործընթացի վրա լույս սփռելու համար ստեղծում է իրեն առընթեր խորհրդակցական մարմին»: Նախագահի հանձնաժողովը գործելու է երկու ամիս, այսինքն՝ գրեթե այնքան, որքան գործելու է այս խորհրդարանը եւ նախընտրական շրջանում աշխարհացունց բացահայտումներ կատարելու լիարժեք հնարավորություն է ստեղծվում, իսկ որոշ՝ հատկապես ընդդիմադիր ուժերի ձեռքից հոեսորական հարցադումներ կատարելու զենքը խլում: Եթե Ամ փորձամասնությունը հրաժարվի գործուղել իր ներկայացուցիչներին այս հանձնաժողով, ապա Ամ-ն իրոք դուրս կմնա խաղից. առայժմ նա տուգանային հրապարակում է:

ՇՈՒԿԱ

# Ամանորյա զեղչեր՝ դեկտեմբերից-դեկտեմբեր

Եթե առեւտրային լուրջ հարաբերություններում զեղչն առեւտրի խթանիչ է, ապա անլուրջ հարաբերություններում, ինչպես օրինակ, երեւանյան որոշ խանութներում, մրցակցության մեջ մնալու ցանկության դրսեւորում է: Վերջերս տարածված զեղչերը հիմնականում թելադրված են միմյանցից ետ չմնալու խուճապից եւ «ամանորյա զեղչեր» անվան տակ երկարաձգվելով ազդարարում են «ամանորյա զեղչերի շարունակություն՝ փետրվարի 8-ից մինչեւ մարտի 10-ը»: Այստեղ գոյություն չունի զեղչման ընդհանուր քաղաքականություն, այն իրականացվում է՝ բացառապես ելնելով ապրանքատիրոջ նպատակահարմարությունից: Ըստ վերջինիս երեւակայության էլ դրսեւորվում է վաճառականական այս հնարանը՝ տալով կամ չտալով սպասված պտուղները. «Tiffany & Tomato» հայտնի խանութը, 50 տոկոս զեղչ հայտարարելով եւ 35 տոկոս զեղչով վաճառք կատարելով կարողացավ իսպառ իրացնել պահեստում ապրանքային տեսքը կորցրած իր ջինսերն ու վերարկուները՝ ազատելով խանութը: Իսկ «Barker»-ի ցուցանակին խոշոր տառերով դաջված «Զեղչ-10-20 տոկոսը» ընդամենը գովազդային բնույթ է կրում. խանութում դժվար թե զեղչված գներով կոշիկ գտնես:

«Հայերդ նույնպես սովորել եմ մեր խորամանկությունը. վերջերս զեղչման եւս մի տարբերակ նկատել տվեց արտասահմանցի մի բարեկամ. զեղչելուց առաջ բարձրացնում եմ ապրանքների գները»:

Պարզ է մի բան. բոլոր դեպքերում, ինչ նպատակով էլ կատարվի մեզանում «զեղչված» գներով առեւտուրը, արվում է կամ գնորդի, կամ հարկային տեսչության աչքերը կապելու հեշտին նպատակով:

ՀՀ հարկային օրենսգրքում զեղչի մասին ոչինչ չի խոսվում, ասում է ՀՀ հարկային տեսչության պետի տեղակալ Արմեն Ալավերդյանը, ուստի դժվար է օրենքի սահմաններում վերահսկել տարեւային այս երեւույթը: Բայց քանի որ հարկերը գանձելիս հաշվի է առնվում խանութի ներկայացրած հաշվետվությունը, հարկային մարմինները երբեմն ստիպված են լինում ստուգել զեղչերի հարցում ապրանքատիրոջ ազնվությունը: Իսկ ընդհանուր առմամբ, ըստ նրա, զեղչերը միայն ավելորդ հոգսեր են հարկային տեսչության ուսերին:

Իհարկե, հարկային տեսչությունը լավ գիտի իր «հոգսերը» թեթեւացնելու ծեւերը: Ուստի մեզ մնում է անհանգստանալ գնորդի համար, որ անպաշտպան է զանազան զեղչանման խայծերի դեմ: Մնում է նաեւ պարզել՝ ներկայիս զեղչարշավն ուղղված է ավելի շատ գնորդ որսալո՞ւն, թե հարկային իսպառգույն օրենքները շրջանցելուն:

Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# «Արծրուն Մարգարյանի հիշատակը չի կարելի պղծել»

*Փաստում է Ալբերտ Բազեյանը*

«Ես համաձայն եմ հրամանատարական կազմի հայտարարությանը, որն արդեն տպագրվել է, ես դրան տեղյակ էի: Շատ ցավալի է, ծանր, երբ մարտական ընկերներիդ կորցնում ես խաղաղ ժամանակ: Դրա դեմ պետք է տանել շատ լուրջ, անհաշտ պայքար: Ուղղակի հասարակական անհանդուրժողականության մթնոլորտ պետք է ստեղծվի այդպիսի հանցագործությունների դեմ, որպեսզի իրավապահ մարմինները հասարակական ճնշման, քաղաքական ուժերի ճնշման, ենթակայության տակ փորձեն լիարժեք կատարել իրենց պարտականությունները, որպեսզի փորձ չկատարվի ինչ-որ ձեւերով որակել դեպքը որպես ինքնասպանություն... Արծրուն Մարգարյանի հիշատակը չի կարելի պղծել», երեկ Ամ-ում արձանագրեց Ալբերտ Բազեյանը: Պատասխանելով «Ազգի» հարցին, թե ինչպես է ինքը գնահատում ՆԳ եւ ԱԱ նախարար Սերժ Մարգսյանի հայտարարությունը, թե սպանությունը չբացահայտելու դեպքում ինքը կդիմի ՀՀ նախագահին՝ իրեն պաշտոնից ազատելու դիմումով, Ա. Բազեյանն ասաց. «Սերժ Մարգսյանն իր դիրքորոշումն է արտահայտել, չեմ կարող մեկնաբանել: Դա ուղղակի մարդկային սկզբունքայնության, բարոյականության խնդիր է»: Նա վերահաստատեց նաեւ իր նախնական կարծիքը դիտավորյալ այս սպանության վերաբերմամբ. «Ես ասացի, որ դեպքի կատարման շարժառիթների, դրդապատճառների մեջ կարելի է տեսնել քաղաքական շարժառիթ, ես չեմ բացառում», ի մի բերեց ԵԿՄ փոխնախագահ, Ամ փոխխոսնակ Ալբերտ Բազեյանը:

Ն. Գ.

# Իշխանության վագոնի մշտական տոմսը կորցնողները

«Ազգը» դիմեց Ամ խոսնակ Խոսրով Հարությունյանին՝ առաջարկելով մեկնաբանել «Հանրապետություն» խմբակցության ղեկավար Բաբկեն Ուրարտյանի այն պնդումը, թե սեփականաշնորհման գործարքների օրինականությունը ստուգող հանձնաժողովի ստեղծման առաջարկին դեմ քվեարկող պատգամավորները իշխանության վագոնում մշտական տոմս ունեցողներն են: Խոսրով Հարությունյանը 91 պատգամավորից միակն էր, որ դեմ քվեարկեց այս նախաձեռնությանը: Ամ խոսնակը փոքր-ինչ մտածեց եւ պատասխանեց. «Գիտե՛ք, իշխանության վագոնում մշտական տոմս ունենալու հարցը հետաքրքիր միտք է: Գոնե ինձ, սակայն, դա չեն կարող վերագրել, բայց պետք է շատ զգույշ լինել: Հատկապես, եթե կան մարդիկ, որոնք երբ այդ մշտականը կորցնում են, պատրաստ են պայթեցնել գնացքը, իսկ դա բոլորովին այլ բան է»:

Ն. Գ.

# Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին օրինագծի հերթական տարբերակը նույնպես վիճահարույց է

ԵՐԵՎԱՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Փետրվարի 12-ին եվրախորհրդի փորձագետները եւ Ամ գիտության, կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերի հանձնաժողովի անդամները համատեղ քննարկեցին հեռուստատեսության եւ ռադիոյի մասին ՀՀ օրենքի նախագիծը: Քննարկմանը, որին ներկայացված էր նախագծի վերջին տարբերակը, մասնակցում էին եւ իրենց տեսակետները ներկայացրին նաեւ Հայաստանի հեռուստառադիոընկերությունների ներկայացուցիչները:

Փորձագետների խոսքերով, եվրախորհրդին Հայաստանի անդամակցությունն ապահովելու պարտադիր պայմաններից է անկախ ԶԼՄ-ների առկայությունը, ինչը պետք է ապահովվի համապատասխան օրենսդրությամբ:

Դրական գնահատելով պետական հեռուստա- եւ ռադիոընկերությունները հասարակականների վերածելու գաղափարը, փորձագետները նշեցին, որ դրանց գործունեությունը վերահսկող խորհրդի անդամների նշանակումը երկրի նախագահի կողմից, ինչն ամրագրված է օրինագծով, քաղաքական միջամտության վտանգ է ստեղծում: Այդ խնդրի լուծման տարբերակ, ըստ փորձագետների, կհանդիսանա խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը խորհրդարանի բոլոր խմբակցությունների ու պատգամավորական խմբերի կողմից:

Մասնավոր հեռուստա- եւ ռադիոընկերությունների ղեկավարների կարծիքով, պետական ֆինանսավորման պայմաններում հասարակական եւ մասնավոր ընկերությունների համար գովազդի հավասար պայմաններ տրամադրելը առաջինների համար կապահովի մենաշնորհ: Նշվեց, որ ներկայումս արդեն պետական հեռուստատեսությունը եւ ռադիոն գրավել են Հայաստանի առանց այն էլ փոքր գովազդային շուկայի շուրջ 85%-ը, իսկ օրինագիծը պայմաններ է ստեղծում այդ տոկոսի բարձրացման համար: Միեւնույն ժամանակ, պետական ընկերություններն ունեն այն տեխնիկական միջոցները, որոնք, ի տարբերություն մասնավորների, հնարավորություն են ստեղծում հաղորդումները տարածել հանրապետության ամբողջ տարածքով:

Նշվեց նաեւ, որ վերոհիշյալ խորհրդի կողմից մասնավոր ընկերությունների լիցենզավորումը եւ տեխնիկական վերահսկման իրականացումը կարող են առաջացնել բազմաթիվ խնդիրներ: Ընկերությունների ներկայացուցիչների կարծիքով, օրինագծում լուրջ թերություններ կան՝ կապված լիցենզավորման պայմանների, լիցենզիաների հատկացման ժամկետների, ինչպես նաեւ դրանցից զրկելու հետ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցություն
Հայաստանի կազմակերպության

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

*տեղի կունենա*
1999 թվականի փետրվարի 14-ին (կիրակի), ժամը 12-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մեծ դահլիճում
*(հասցեն՝ Երեւան, Մարշալ Բաղրամյան 24)*
Մուտքը միայն հրավիրատոմսերով եւ մանդատներով:
Պատգամավորների գրանցման եւ հաշվառման սկիզբը՝ ժամը 10-ին:

ՍԴՀԿ
*IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԿՈՄԻՏԵ*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ը տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 562941, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Տնօրէն
ՀՐԱՅՐ ՁՕՐԵԱՆ / հեռ. 562863

Համակարգչային ծառայութիւն / 562941

Apple Macintosh
համակարգչային օգտագործը «Ազգ» թերթի

Յղումը «Ազգին» պարտադիր է

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# տեղական

ՀԱՇՎԵՏՈՒ

# Ծանրության կենտրոնը տեղաշարժվում է դեռի դիտավորյալ սպանության վարկածը

*ՀՀ դատախազությունը՝ պետական շահերի հանձնառու*

Փետրվարի 12-ին տեղի ունեցած ՀՀ դատախազության կոլեգիայի ընդլայնված նիստի օրակարգում դատախազության մարմինների 1998 թ.-ի ավարտի արդյունքների վերաբերյալ գլխավոր դատախազի տեղակալներ Ժիրայր Խառատյանի, Արմեն Խաչատուրյանի եւ Միխայել Բաղիրյանի, ՀՀ զինվորական դատախազ Գագիկ Ջհանգիրյանի եւ ՀՀ դատախազության քննչական վարչության պետ Անդրանիկ Միրզոյանի հաշվետվություններն էին եւ ամփոփումը: Լսվեցին նաեւ Երեւան քաղաքի, Շիրակի եւ Կոտայքի մարզերի, Կենտրոն համայնքի դատախազների զեկուցումները, որից հետո դատախազության հաջողությունների եւ բացթողումների, պրոբլեմների եւ անելիքների փունջն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը:

ՆԳ փոխնախարար Արծրուն Մարգարյանի սպանության եւ դրան նախորդած իրադարձությունների (Վանո Սիրադեղյանին ներկայացված մեղադրանքի եւ «արատասահմանյան ուղեւորության») առնչությամբ առկա տագնապալից մթնոլորտը հաշվի առնելով, գլխավոր դատախազը խախտեց օրակարգի սահմաններից դուրս չգալու «պողպատյա» ավանդույթը եւ նիստից հետո պատասխանեց լրագրողներին եւ հասարակությանը հուզող հարցերին դիվանագիտորեն, սակայն, խուսափելով նախաքննության համար «վտանգավոր» փաստերի հրապարակումից:

Լրագրողների հետաքրքրության թիրախն Արծրուն Մարգարյանի սպանությունն էր, որն Հովսեփյանի կարծիքով, «անբասիր աշխատանքով աղորող մի անձնավորություն, որը տնտեսական գործունեությամբ չէր զբաղվում»: Եթե ՊՆ փոխնախարար Վահրամ Խորխոռունու սպանության պարագայում աշխատանքային վարկածների շրջանակը լայն էր (16 վարկած), ապա այս դեպքում 18 հոգանոց քննչական խումբը աշխատում է երեք վարկածի վրա՝ ինքնասպանություն եւ դիտավորյալ սպանության երկու տարբերակ (սպանություն թիկնապահների կողմից, որոնց ցուցմունքները հակասական, երբեմն իրարամերժ են, եւ երրորդ անձի կամ անձանց կողմից): Գլխավոր դատախազը հերքեց ՆԳ եւ դատախազության մարմինների միջեւ տարաձայնությունների առկայությունը (լրագրողների տպավորությամբ, դատախազությունը հակված է ինքնասպանության վարկածին, մինչդեռ ՆԳ նախարար Սերժ Սարգսյանը բացառեց այդ տարբերակը). նախաքննության տվյալները դեռեւս թույլ չեն տալիս կենտրոնանալ կոնկրետ վարկածի վրա, եւ քննչական խումբը պարտավոր է ստուգել նաեւ ինքնասպանության տարբերակը, թեպետ հիմնական վարկածն, ըստ ամենայնի, դիտավորյալ սպանությունն է:

ՍՊՈՒՏՆԻԿ

ՆԳ փոխնախարարի սպանությունը տեղի կունենա՞ր, եթե ժամանակին բացահայտվեր մեկ տարի առաջ Արծրուն Մարգարյանի նկատմամբ կատարված մահափորձը: **«Ազգի»** հարցին ի պատասխան, որն Հովսեփյանն ասաց. «Այդ դեպքը մահափորձ չէի որակի. Արծրուն Մարգարյանին պարզապես մարմնական վնասվածք էին պատճառել՝ կրակելով ոտքին: Դեպքի առնչությամբ բավական մեծ քննչական եւ օպերատիվ աշխատանք է կատարվել, սակայն մեղավորները, ցավոք, չբացահայտվեցին: Այդ դեպքի եւ սպանության միջեւ կապի մասին տվյալներ չունենք»: **«Ազգի»** երկրորդ հարցին պատասխանելով, գլխավոր դատախազը դրական գնահատեց ԱՄՆ եւ Ռուսաստանի իրավապահ մարմիններին Արծրուն Մարգարյանի սպանության գործով «օգնության կանչելու» ՆԳ եւ ԱԱ նախարարի նախաձեռնությունը. որոշումը կայացվել է համատեղ քննարկումների արդյունքում: Այլ երկրների հետ համագործակցելու պրակտիկան վաղուց արդեն կիրառվում է աշխարհում, իսկ Հայաստանի պարագայում, որտեղ նախաքննության մարմինների տրամադրության տակ գտնվող տեխնիկան խղճուկ, նախնադարյան վիճակում է, արտասահմանյան տեխնիկական ներուժի ներգրավումն առավել քան արդարացված է. «Մեր քննիչները թղթից ու գրչից բացի ոչինչ չունեն»:

ՀՀ նախկին նախագահի անվտանգության ծառայության պետ Ռոմեն Դազարյանին (Բուդոյին) բերման ենթարկելու վերաբերյալ հարցին գլխավոր դատախազի պատասխանը հակիրճ էր. «Այդպիսի տվյալներ չունենք»: Բարձրաստիճան պաշտոնյաների կարճ ժամանակահատվածում իրար հաջորդած աղմկալից սպանություններից հետո բնական չէ՞ր ակնկալել ՆԳ եւ ԱԱ նախարարի հրաժարականը, հետաքրքրվեցին լրագրողները: Պրն Հովսեփյանը չհամաձայնեց. «Անձամբ ես բարձր եմ գնահատում ՆԳ եւ ԱԱ մարմինների աշխատանքը»:

«Օրախնդիր» հարցերից, սակայն, վերադառնանք դատախազության ընդլայնված նիստին: Գլխավոր դատախազն ընդհանուր առմամբ բավարարված էր վերջինիս ընթացքով, քանզի խոսակցությունն, ըստ նրա, ավելի շուտ գործնական-ինքնաքննադատական, քան ցուցադրական ոգով էր: Հաջողությունների եւ թերացումների հաշվեկշռի ամփոփումից, դատախազության աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղված հանձնարարականներից հետո, որն Հովսեփյանն որոշ սկզբունքային շեշտադրումներ արեց դատախազության գործունեության հիմնարար սկզբունքների վերաբերյալ: Առաջինն անկախության սկզբունքն է, որ ամրագրված է դատախազության մասին նոր օրենքում եւ այսօր գործնականում կիրառվելու հնարավորություն ունի. դատախազը չպետք է կուլ գնա արտաքին ճնշումներին: Երկրորդ սկզբունքն անկուսակցականությունն է: Գլխավոր դատախազի համոզմամբ, դատախազության աշխատակցի միակ կուսակցությունը պետությունն է եւ օրենքը: Ոչ պակաս կարեւոր է երրորդ օրինապահության սկզբունքը. «Օրինապահ լինենք ինքներս. ոչ մի անօրինականություն մեր առօրյա աշխատանքում»: Անդրադառնալով դատախազության նոր կառուցվածքին եւ կադրային խնդիրներին, գլխավոր դատախազը կարեւորեց դատախազների ատեստավորման 1999 թ. նախատեսված գործընթացը կոչ անելով դատախազներին լրջորեն աշխատել որակավորման բարելավման, դատավարական օրենսդրության «յուրացման» ուղղությամբ: Դատախազության մասին նոր օրենքը հստակեցրել է դատախազության իրավասությունների շրջանակն, այն է պետական շահերի (ոչ թե առանձին քաղաքացիների կամ մասնավոր ձեռնարկությունների) պաշտպանություն, ուստի պրն Հովսեփյանը ներկաներին հորդորեց պետական մտածողություն դրսեւորել առօրյա աշխատանքում, քանզի «յուրաքանչյուր դատախազ պետականության սյունն է իր մարզում»...

ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՐՑԱԽՈՒՅԶ

# Ամենից հեղինակավոր քաղաքական գործիչը Դեմիրճյանն է

«Եվրասիա» հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ ՁԼՄ ընկերակցությունը անցկացրել է հարցում «Քաղաքական կուսակցությունները եւ զանգվածային լրատվամիջոցներն առաջիկա խորհրդարանական ընտրությունների ներքո» թեմայով: Քանի որ հարցումն ընդգրկում է սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսները, ՁԼՄ ընկերակցության գործադիր տնօրեն Ատոմ Մելիքյանը չբացառեց, որ քաղաքական վերջին բուռն իրադարձությունները որոշակի տրբագրում կարող են մտցնել հարցման արդյունքներում: Ինչեւէ, լրագրողներին երեկ բաժանված հետազոտության թվական տվյալների համաձայն հարցվողների հիմնական մասը՝ 79 տոկոսը, լրատվություն ստանում է հեռուստատեսությունից: Ամենաշատ կարդացվող թերթը «Առավոտն» է՝ 10,75 տոկոս, այնուհետեւ «ՀՀ»-ն՝ 7, «02»-ը՝ 5,42 տոկոս, «Իրավունքը»՝ 4,83 տոկոս, «Ազգը»՝ 1,48 տոկոս: Ամենամասսայական ռադիոկայանը Հայ FM-ն է՝ 23,6 տոկոս: Հարցվողների 75,6 տոկոսը լրագրողի գործունեության մեջ կարեւորում է հետաքրքրական նյութեր հրապարակելը, ամենահետաքրքրական թեման համարում են միջազգային կյանքի լուսաբանումը՝ 61,6 տոկոս, այնուհետեւ դատական քրոնիկան՝ 50,4 տոկոս եւ պատահական չէ, որ արդյունաբերական օբյեկտների սեփականաշնորհումից հետո (14,2 տոկոս) հանրաքվեության ներքին կյանքում ամենահետաքրքրականը՝ 7 տոկոս, դատախազի եւ մյուս քաղաքական սպանություններն են:

Քաղաքական, կուսակցական գործիչներից Ազգային ժողովում հարցվողներն ամենից շատ ցանկացել են տեսնել Կարեն Դեմիրճյանին՝ 15,6 տոկոս: Ռոբերտ Քոչարյանին՝ 10,1 Վազգեն Մանուկյանին՝ 8,9 տոկոս եւ այլն: Հարցման մասնակիցների 66,4 տոկոսը դժվարացել է հայտնել իր տարածքից ընտրված ԱԺ պատգամավորի անունը եւ դժվարացել է պատասխանել, թե որ կուսակցությանն է հարում նա: «Հայաստանի քաղաքական կուսակցություններից ո՞րն է արտահայտում ձեր շահերը» հարցին՝ 5,92 տոկոսը, ամենաշատը բաժին է ընկել Կոմկուսին, այնուհետեւ՝ ՀՅԴ-ին՝ 3,06 տոկոս, ԱԻՄ՝ 2,66 տոկոս եւ այլն:

Տեղեկագրից, ցավոք, բացակայում է հարցման մասնակիցների թիվը:

Ս. Պ.

# «Ես ասացի այն, ինչ ասացի»

*Պրն Հ. Դալլաքյանը գտնում է, որ լրագրողների «սադրիչ հարցերը» կիսանգարեն*

Փետրվարի 12-ին ազգային ռադիոյի «Անդրադարձ» ծրագիրը բանավեճի էր հրավիրել տեղեկատվության եւ զրահաստարակության վարչության պետ, ՀՌԱԿ նախկին ատենապետ Հարություն Կարապետյանին եւ «Ազգ» թերթի գլխավոր խմբագիր, ՀՌԱԿ վարչության անդամ Հակոբ Ավետիսյանին՝ կուսակցության մեջ տեղի ունեցող վերջին գործընթացների շուրջ: Պրն Կարապետյանը, սակայն, չէր ներկայացել՝ իր փոխարեն լիազորելով կուսակցության երկու շարքային անդամների, որոնց հետ պրն Ավետիսյանը հրաժարվել էր բանավիճելուց:

Նույն օրը ժամը 3-ին, նախօրոք արված հայտարարության համաձայն, Հարություն Կարապետյանը Արմենպորտի սրահում ասուլիս էր հրավիրել: Կես ժամ սպասեցնելուց հետո նրա փոխարեն դարձյալ ներկայացան ուրիշներ՝ ՀՌԱԿ նախկին փոխատենապետ Համլետ Դալլաքյանը, կուսակցության նախկին գործիչ Գրիգոր Պետրոսյանը, որն արդեն արտաքսվել է կուսակցությունից, եւ «Դավիթ Բեկ» ակումբի ատենադպիր Արմեն Բաղդասարյանը: Լրագրողներին ոչինչ չասող անուններ, որոնք պրն Դալլաքյանի ասելով, կուսակցության մարզային եւ տարածքային ակումբների ատենապետների եւ ներկայացուցիչների կողմից ընտրված են աշխատանքային այն խմբում, որը կուսակցության կանոնադրության 73 հոդվածի բ կետի համաձայն, բոլոր կուսակցականների երկու երրորդի պահանջով նախապատրաստելու է արտահերթ պատգամավորական ժողով:

Պրն Դալլաքյանը ներողություն խնդրեց լրագրողներից Հարություն Կարապետյանի չներկայանալու համար՝«նա զբաղված էր»: Ապա շատ համառոտ շարադրեց իր ասելիքը. «Իրավիճակը բարդ եւ պատասխանատու է, եւ մենք քաջ գիտակցում ենք, թե ինչի առջեւ ենք կանգնած: Կուսակցությունն իսկապես պառակտման եզրին է, զգալով այդ պատասխանատվությունը մենք թիմով որոնումների մեջ ենք, որպեսզի բանակցությունների ճանապարհ գտնենք՝ վերջնականապես կուսակցությունը պառակտումից փրկելու համար: Բանակցությունների ճանապարհներ կան, եւ լրատվամիջոցների դերն այստեղ կարող է շատ ճակատագրական լինել թե՛ դրական, թե՛ բացասական առումներով: Ես պետք է տրանով սահմանափակեմ եւ ձեզ խնդրեմ, որ այս հարցում առավելագույն միջամտություն չցուցաբերեք՝ եւս մեկ անգամ կողմերին հնարավորություն տալով, որպեսզի ընդհանուր լեզու գտնեն»: Պրն Դալլաքյանն այսպանով ցանկացավ կանխել լրագրողների հարցերը եւ անկեղծորեն զարմացավ վերջիններիս անզիջում պահվածքից: «Ես ասացի այն, ինչ ասացի», պնդեց նա՝ ենթադրելով, որ լրագրողական հարցերը կարող են միայն «սադրիչ» լինել եւ խախտել բանակցությունների գործընթացը: «Ճիշտ հասկացեք եւ մեզ ծանր վիճակի մեջ մի դրեք որեւէ հարցի պատասխանելու, որովհետեւ հարցը հարց է բերելու եւ կարող է նորից ինչ-որ...»: Մեծ դժվարությամբ, բայցեւայնպես համաձայնեց պատասխանել «ոչ սադրիչ հարցերին» եւ ավելացրեց, թե ամենաշատը պրն Կարապետյանն է շահագրգռված, որ ամեն ինչ հարթ ընթանա: Տեղեկացրեց, որ նախապատրաստվում է երկու կանոնադրական ժողով, մեկը՝ կանոնադրության 73-րդ հոդվածի ա կետի դրույթով, մյուսը՝ նույն հոդվածի բ կետով: Եվ այն համոզմունքին է, որ «եթե Հանրապետական վարչությունը սխալ որոշում է կայացնում պատգամավորական ժողով հրավիրելու համար, ապա բոլոր դեպքերում շարքային կուսակցականներին պետք է հնարավորություն տրվի հրավիրելու իրենց պատգամավորական ժողովը»: Հարցերից խուսափելը մեզ հնարավորություն չտվեց պարզելու, թե արդյոք փոխվե՞լ է ՀՌԱԿ կանոնադրությունը, որ նախատեսում է պատգամավորական ժողովի հրավիրումը միայն Հանրապետական վարչության կողմից:

«Եթե ուզում եք իմանալ՝ զարգացումները եթե ընթանան, ես որ պատգամավորական ժողովին կմասնակցեմ, առաջինը կուզենամ՝ միացյալ, բայց եթե չլինի, ուրեմն կմասնակցեմ այն ժողովին, որն արտահայտում է կուսակցականների ավելի ներկայացուցչական՝ երկու երրորդի պահանջը եւ ոչ թե 10 հոգու»: Ասվածից միանգամայն պարզ է, որ պրն Դալլաքյանը գործ չունի «10-հոգանոց» Հանրապետական վարչության եւ վերջինիս կողմնակից 21 ակումբների հետ: Նրա ասելով, Հանրապետական վարչությունն այսօր հրավիրել է իր պատգամավորական ժողովը, սակայն անպատասխան մնաց, թե երբ են իրենք՝ «մեծամասնությունը» հրավիրելու իրենց պատգամավորական ժողովը: «Մեր գրավոր պահանջներում գրված են՝ անհապաղ, մենք այսօր կարող էինք հրավիրել: Ընդ որում՝ այդպես էլ կա, նրանք արդեն երեկվանից պատրաստ են ժողովի գալ», գաղտնիքն այսպանով բացեց Համլետ Դալլաքյանը: Ապա ավելացրեց. «Դուք պատկերացնո՞ւմ եք մի անհեթեթ վիճակ՝ հավաքվում է Հանրապետական վարչության կողմից գումարված էդ պատգամավորական ժողովը եւ հավաքվում է մեծամասնության ժողովը»: Թերեւս հենց այդ՝ անհեթեթ վիճակից փոքրամասնությանը փրկելու համար պրն Դալլաքյանը նրանց հնարավորություն է տալիս ընդհանուր ճանապարհներ գտնել: Եթե չլինի, ուրեմն ամեն մեկս պիտի գնանք մեր ճանապարհով: Մեկ ոամկավար կորցնելն էլ մեզ համար ծանր է: Չպետք է ամեն ինչ անել կուսակցականների ետեւում, պետք է ամեն ինչ անել կուսակցականների մասնակցությամբ», իրենց դիրքորոշումը պարզաբանեց նախկին փոխատենապետը:

Պրն Դալլաքյանն այնքան լավատես էր, որ կարծում էր նման իրավիճակները բարձրացնում են կուսակցության վարկանիշը եւ եթե «չկորցնեն կուսակցությունը, այս դեպքում նույնիսկ դիվիդենտներ շահած դուրս կգան»:

ՍՈՒՍԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

# Ազգային

## Տեառնընդառաջ

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու տոների մեծ մասն իրենց հաստատուն տեղն ունեն տոնացույցում դեռեւս քրիստոնեության վաղ շրջանից: Այդպես եւ Տեառնընդառաջը (Տիրոջն ընդառաջ գնալ, ելնել), որը Հակոբոս Տեառնեղբոր շնորհիվ անցավ տերունական տոների շարքը, իսկ ե դարում մտցվեց Հայ եկեղեցու տոնացույցում: Հայ եկեղեցին Տեառնընդառաջը մշտապես տոնում է փետրվարի 14-ին: Ժողովուրդն անվանել է Տերնդեզ, Տրնդեզ, Տրնտես: Դրանք «Տերն ընդ ծեզ» արտահայտության աղավաղված ձեւերն են, որով հիշատակվում է քառասունօրյա Հիսուսի ընծայումը տաճարին: Մովսիսական օրենքի համաձայն, յուրաքանչյուր առաջնեկ ոտեք է ընծայվեր Աստծուն, այդ պատճառով երբ մանուկ Հիսուսի քառասուն օրերը լրացան, նրան բերեցին Երուսաղեմի սաղմոսերգի տաճարը՝ Աստծուն ընծայելու: Ղուկաս ավետարանիչը պատմում է, որ Երուսաղեմում այդ ժամանակ Սիմեոն անունով մի արդար ու աստվածավախ մարդ էր ապրում, որին Սուրբ Հոգին խոստացել էր մահ չտեսնել, մինչեւ որ տեսներ Տիրոջ Օծյալին, այսինքն՝ Փրկչին: Սուրբ Հոգով առաջնորդված նա իջնում է տաճար այն պահին, երբ Հովսեփը եւ Մարիամը Հիսուս մանուկին տաճար էին բերել: Սիմեոն ծերունին մանկանը վերցնելով գիրկը, օրհնում է եւ ասում. «Այժմ, ով Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետեւ այրերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար եւ փառք Իսրայելի Քո ժողովրդի համար» (Ղուկաս Բ:29-32): Տեառնընդառաջի տոնի խորհրդում խտանում են աստվածփնտրումի մեր կարոտն ու սպասումը, Տիրոջն ընդառաջ գնալու մեր անհատնում փափագը, Աստծո որդուն՝ Հիսուս Քրիստոսին Փրկիչ ճանաչելու, մեր հոգիներում ընդունելու եւ փառաբանելու երջանկությունը, որպեսզի կրկնենք Սիմեոն ծերունու նման. «... այրերս տեսան փրկությունը Քո»...

Փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո տեղի է ունենում նախատոնակ, անդաստան, որից հետո հավատացյալները վառում են իրենց մոմերը Ս. Սեղանից իջեցված աշտանակից եւ տանում տուն: Տեառնընդառաջի խարույկը, որպես ժողովրդական հնագույն սովորություն, առավելաբար առնչվում էր նորահարսների եւ բերքի օրհնության հետ: Հավատության մասին քրիստոնեական եւ եկեղեցական որեւէ օրենք եւ կանոն գոյություն չունի: Այնուամենայնիվ, ժողովրդական մեծ տարածում ունեցող այս սովորույթը մինչեւ օրս պահպանվել է մեր մեջ եւ վերաիմաստավորվել՝ ստանալով նոր իմաստ՝ ճրագի մեջ տեսնելով Քրիստոսի փրկարար լույսը: Եկեղեցու բակում վառվում է խարույկ, որի շուրջ խմբվում է հավատացյալ ժողովուրդը, իսկ հոգեւոր դասը կատարում է անդաստան՝ օրհնելով երկրի չորս կողմերը: Տեառնընդառաջի երեկոյան կատարվող Անդաստանը ձմռան վերջանալու եւ գարնան դռների բացվելու առաջին մունետիկն է, որ բնության հետ կարծես մարդկանց սրտերը վերստին վերանորոգության է հրավիրում՝ աշխատության եւ հոգու մեղսածին թմրությունից արթնանալու:

Սիրելի նորադարձներ, Ձեր համատեղ կյանքի առաջին Տեառնընդառաջն է այսօր: Ձեզ ենք բերում մեր հոգեբուխ օրհնությունը եւ մաղթում, որ կյանքի Ձեր նորընթաց ուղին Տիրոջն ընդառաջ գնալու լայն ճանապարհ դառնա՝ լուսավոր, ամուր հավատքով, սիրառատ եւ ծանրաբեռն հայրենի ժողովրդի առջեւ Ձեր արդար ու աստվածահաճո գործերով: Թող ամենախնամ Աստված պահի ու պահպանի Ձեզ, օրհնի ընտանեկան Ձեր հարկը՝ պարգեւելով մանկական խինդով արժեւորված լիապորումն երջանիկ բազում օրեր, հարանորոգ հաջողություններ:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ
ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

## Նորադարձների հանդիսավոր օրհնություն

Տեառնընդառաջի տոնի առիթով փետրվարի 14-ին Արարատյան Հայրապետական թեմն առաջին Տեառնընդառաջը նշող նորադարձների համար կազմակերպում է հանդիսավոր օրհնություն: Քաղաքամայր Երեւանի եկեղեցիներում օրհնության հանդիսավոր կարգը կկատարվի հավատացյալ ժողովրդի նաեւ Արաքիրի, Նորքի եւ Մալաթիայի հայորդաց տներում:

Պատարագի սկիզբը 11:00-ին: Օրհնության կարգը՝ 12:30-ին:

Սիրով հրավիրում ենք բոլոր նորադարձներին մասնակցելու օրհնության հատուկ արարողությանը:

ՄԱՍՏԵՐ ՊԻՇԱՆ,
ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ

# Տերընդեզ, Տերընդեզ, դարման ու կեզ, կրակը ինձ, ծուխը քեզ

Տեառնընդառաջը կամ Տրնդեզը, որը Հայաստանի մի քանի գավառներում պարզապես կոչվում էր Դեզ, Կարնո գավառից վերաբնակված հայերի մեջ՝ Դերընտես, Տփղիսում՝ Ճիակոկոլա, իսկ Զանգեզուրում Ղըռդարանչի, հնագույն ժամանակներից մեզ հասած կրակի պաշտամունքի ծիսակատարություն է, որով նորոգվում էր կրակի արդեն ուժասպառ եղած զորությունը չքերությունը վերացնելու եւ բարիքների առատ առատությունն ապահովելու համար: Խարույկը գարնան ավետաբերի, ցուրտ օրերին հրաժեշտ տալու, մաքրագործելու խորհուրդ ուներ: Քրիստոնեության ընդունումից հետո Տեառնընդառաջը քրիստոնեական երանգ ստացավ եւ շարունակեց նշվել ամեն տարի փետրվարի 14-ին՝ իբրեւ քրիստոնեական տոն:

Սասունում Տերընդեսն ամեն տուն կատարում էր, միմյանց հրելով, խոսելով եւ կռվելով աբխատում են վառել մոմը ջահից եւ առանց հանգցնելու տանել տուն: Բակերում եւ երդիկներում արդեն դիզված խոտի կույտերը վառվում են եկեղեցուց բերված մոմերով: Սակայն ամբողջ մոմը չեն վառում, մի քանի կաթիլ կաթեցնում են գլխարկի մեջ, որպեսզի կայծակը իրենց չխփի, պահում են եւ կարկուտի ժամանակ վառում, որ կարկուտը կտրի, ինչպես եւ երաշտ ժամանակ, որ անձրեւ գա: Ծերունիները ուշի-ուշով հետեւում են, թե ծուխը որ կողմն է գնում, որովհետեւ այն կողմից է գալու սպասելի փեսացուն կամ հարսնացուն: Իսկ ավելի խորագետները պնդում են՝ եթե ծուխը հարավ կամ արեւելք երթա՝ հասկը լավ է լինելու, եթե հյուսիս կամ արեւմուտք՝ վատ: Երեխաներից սկսած մինչեւ ծերերը թռչկոտում են Տերնդազի վրայով, իսկ աղջիկներն ու կանայք պտտում տուրջը՝ բոլորելյան «Ոչ քորոտիմ, ոչ բորոտիմ» ասելով: Իսկ մի քանի երիտասարդներ էլ բղավում են.

«Տերնդազ, քուրդ ինձի տաս,
Ես պազնեմ, դուն դուրանաս»:

Մինչեւ նորապսակ ամուսինների կրակի շուրջ պտտվելու գալը փոքր տղաներն ու աղջիկները հատուկ այս նպատակի համար գործված գուլպաներ կամ արախչիներ են ձգում կրակը, որպեսզի շնորհք ստանան: Հարս ու փեսա, ձեռներին զույգ մոմեր, հարսի կողքին սանամայրը, փեսինը՝ կնքահայրը կանգնած, ձեռներին մի-մի մոմ, երեք անգամ պտտում են: Տերնդազի շուրջը պտտեցնում են նորածին երեխային, որ քառասունը լցվի: Երբ կրակը հանգչում է, կանայք մոխիրը կճուճների վրա են ածում, որ բարեբաստ ավելանա, տան երդիկից ներս են շաղ տալիս, ասելով՝ կատուն ներսը՝ մուկը դուրսը, որպեսզի մկները ջարդվեն: Մոխիրը լցնում են նաեւ հավանոցի երդիկից ներս՝ որ հավերը շատ ձու ածեն:

Ինչպես հունական աշխարհում, նույնպես եւ հայկական գավառներում, մասնավորապես Զանգեզուրում, Ղըռդարանչի ծիսակատարության հիմնական մասը կազմում է տաճարից բերած կրակով դեզի բոցավառումը եւ այդ դեզից տներում կրակի նորոգումը: Այսպես, խնձորեսկում, ամենից շատ վճարողը, որը, սակայն, պիտի լինի անպատճառ այդ տարվա նորապսակներից մեկը, եկեղեցում վառում էր աշտանակի 12 մոմերը: Ժամվորներն այդ մոմերից վառում էին իրենց մոմերը եւ առանց հանգցնելու հասցնում տները՝ այնտեղ ճրագի կրակը վառելու համար: Այլ գյուղերում եկեղեցում վառած մոմերով վառում էին եկեղեցու բակում սյունանման կիտած դեզը: Դեզը կիտում էին այդ տարվա նորապսակները: Խարույկից վառած մոմերը կամ ցողունները զգուշությամբ, որպեսզի ճանապարհին չհանգչեն, տանում էին տուն եւ վառում ճրագը կամ թոնրի կրակը: Խանձված ճիպոտները կախում էին խնոցու վրա, որ նրա մեջ հարվող մածունից ավելի շատ կարագ դուրս գա: Ճիպոտը պահում էին մինչեւ Զատիկ՝ բնության վերջնական արթնացման օրը, նրա վրա զատկական թանեպտաչը եփելու համար՝ որ նրա զորությունն ավելի ազդի հաջորդ ժամանակաշրջանի առատության վրա: Դըռդարանչի օրն ընդհանվում էին բոլոր քառասունները՝ թե՛ նորապսակ զույգերի եւ թե՛ ծննդկան կնոջ: Այդ օրից մինչեւ Զատիկ պտակ չէր լինում: Թվում է, թե քառասունների ընդհատումը եւ այնուհետեւ պտակի արգելումը մինչեւ բնության վերջնականապես արթնանալն ու զարթոնքը պետք է բացատրել երկյուղով, որ բնությունն այդ ժամանակամիջոցում բեղմնավորված լինելով՝ հղիացած է եւ քառասունները կարող են հղիացումը խափանել, փչացնել:

Երբին Բասենում նորապսակները եւ նշանված աղջիկները մի քանի անգամ պտտվում էին խարույկի շուրջը, իրենց զգեստի ծայրն այրում՝, որ օձն իրենց չխայթի: Նշանված աղջիկների համար Տերընդեզին սկեսրանց տնից կորկոտի աղանձ էին բերում՝ վրան մեղր լցրած: Խարույկները վառելու ժամանակ վերջին տարիներին հրացաններով կրակում էին: Հրացանի ձայնին անսովոր գյուղի շները խուճապահար փախչում էին-որեւէ կողմ: Այդ կողմերի արտերից էլ այդ տարի առաս բերք եւ խոտհունձ էին սպասում:

Քարիքներ ակնկալելով սրբազան կրակից, Բալուում պատանի տղաներն ու աղջիկները, նորապսակները հավաքվում էին խարույկի շուրջը եւ հատուկ երգեր երգում: Երիտասարդ տղաները ցատկում էին բոցերի վրայով, իսկ աղջիկներ՝ զույգ-զույգ, իրար ձեռք բռնած, խարույկի շուրջը երեք անգամ առագ վազքով պտույտ էին գործում: Նույնն էին անում դեռատի հարսներն իրենց կրծքի երեխաներին գրկած, մինչեւ որ խարույկը հանգչում էր:

*Նյութը հաղորդած է ազգագրական ուսումնասիրություններից*

## Ո՞վ ես դու, սուրբ Վալենտին կամ այս անգամ էլ՝ տոնահեղություն

Վերջին օրերին ազգային հեռուստատեսության եթերում գովազդի տեսքով կոչեր են հնչում փետրվարի 13-14-ին նշելու ինչ-որ սուրբ Վալենտինի տոն՝ որպես սիրո եւ երիտասարդության խորհրդանիշ: Այստեղ երկրորդական է դառնում այն կարեւորը, որ հիշված օրերին մեր եկեղեցին նշում է Տեառնընդառաջի՝ Հիսուս Քրիստոսին ընդառաջ գնալու գեղեցիկ տոնը: Թեեւ այս տոնը եւս երիտասարդական է, նորապսակների, ջահել աղջիկների համար լի բովանդակությամբ արարողություններով, բայց հարցը տեղափոխված է կրոնական այլ ոլորտ: Վատիկանի շանթերով, կաթոլիկ եկեղեցու տոներից մեկը Հայաստանյայց առաքելական եկեղեցու հավատացյալների օգտին փոխ[illegible] Սեւ առաջին փորձը չէ: Անցած տարի չգիտես ում օրհնությամբ փորձեցին այդ բանն իրականացնել: Ո՞րն է վերջնական նպատակը: Ի՞նչ է, «Եհովայի վկաներից» դեռ չձերբազատված, Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պատվե՞ռն ենք կատարում: Հայոց եկեղեցին, ասել է թե հայ ժողովրդին ստիպաբար մաս-մաս անելու, Հայաստանյայց առաքելական եկեղեցու տոնացույցի մեջ օտար անուն մտցնելու հեռագնա ծրագիրը ո՞վ է հովանավորում: Գուցե մեր հոգեւոր հայրերը լվանո՞ւմ են-ծեռքերն այս հարցում եւս, ինչպես «Եհովայի վկաների» պարագայում, վկայաբերելով «մարդու իրավունքի» կատեգորիան: Եթե ոչ, ուրեմն ս. Էջմիածինը պետք է [illegible] հայաստանյայց այդ տոնահեղության դեմ: Սիրո, երիտասարդության այլ տոն են ցանկանում նշել, համեցեք՝ սուրբ Սարգսի փառավոր, տոպավորիչ տոնը՝ սիրո, ամուսնության հավատարմության, երազում ցանկալիին տեսնելու գեղեցիկ ավանդույթը, համեմված ազի բլիթի, ծիու պայտի պատկերացումներով: Մեկ այլ տոն: Նշենք լուսապսակ Վարդան Մամիկոնյանի դստեր՝ սուրբ Շուշանիկի տոնը, որ մեր եկեղեցու առաջնորդների անտարբերության հետեւանքով սեփականացրին եւ տոնում են վրացիները: Հարկ է, որ թույլ չտանք փորձառության վերածել մեր եկեղեցու ազգապահպան ավանդույթները:

ՌՈՒԲԵՆ ԲԱԳԱՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

## Միջազգային

# Սիրիայի ժողովուրդը հանրաքվեով վերընտրեց նախագահ Հաֆեզ Ասադին

Ազգային ռազմավարական տեսանկյունից, ի շարս 20-րդ դարի արաբ ղեկավարների, Եգիպտոսի նախկին առաջնորդ Գամալ Աբդուլ-Նասերը եւ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադն ամենակարեւոր դեմքերից են: Առաջինի վախճանվելուց (1970 թ. սեպտեմբերի 28-ին) 2 ամիս չանցած, 1970 թ. նոյեմբերի 16-ին, մեծ քաղաքականության բեմահարթակ բարձրացավ երկրորդը՝ բարեփոխիչ շարժման միջոցով: Ահա թե ինչու փետրվարի 10-ին, ծայների գերակշիռ մեծամասնությամբ, շուրջ 9 մլն քաղաքացի (ընտրողների 99,987 տոկոս) հանրաքվեի միջոցով 5-րդ անգամ վերընտրեց նախագահ Հաֆեզ Ասադին՝ սահմանադրական նոր գահակալության համար, որը տեւելու է 7 տարի: Նա առաջին անգամ նախագահ դարձավ 1971 թ. մարտին՝ ժողովրդական հանրաքվեի միջոցով: Այնուհետեւ առ այսօր, ըստ ՍԱՀ սահմանադրության, 7 տարին մեկ վերընտրվել է անընդմեջ:

Հաֆեզ Ասադը ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 6-ին՝ Կարդահայում (Լաթաքիայի նահանգ), ուր ստացել է նախնական կրթությունը: 1952 թ. կամավորագրվել է ռազմական ինստիտուտում: Ունի զինվորական բարձրագույն կրթություն եւ ավարտել է գրոհային օդաչուի դասընթացներ: Ակտիվորեն մասնակցել է 1963 թ. մարտի 8-ի հեղափոխությանը, որն իշխանության բերեց Արաբական սոցիալիստական վերածնունդ (ԲԱԱՍ) կուսակցությանը (ԱԱՎԿ): 1964 թ. նշանակվել է օդուժի հրամանատար, իսկ 1966-70 թթ.՝ պաշտպանության նախարար: 1970 թ. նոյեմբերից 1971 թ. մարտը վարչապետ էր: 1971 թ. դարձավ Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ եւ զինյալ ուժերի գլխավոր հրամանատար: 1972 թ.-ից գլխավորում է ազգային առաջադիմական ճակատը, որն այսօր ընդգրկում է Սիրիայի 8 առաջատար քաղաքական ուժեր: 1971 թ.-ից ԱԱՎ կուսակցության ընդհանուր քարտուղարն է: 1973 թ. Եգիպտոսի նախկին նախագահ Անվար Սադաթի հետ մեկտեղ պատերազմ է հայտարարել Իսրայելին՝ արաբական գրավյալ հողերն ազատագրելու նպատակով: 1980 թ. Խորհրդային Միության հետ կնքել է բարեկամության եւ համագործակցության պայմանագիր: Դամասկոսի համալսարանի պատվավոր դոկտոր է:

Իշխանության գլուխ գալով, նախագահ Ասադը վերջ դրեց 1946 թ. անկախությունից ի վեր երկրում հաճախակի դարձած հեղաշրջումների (թվով 7) ժամանակաշրջանին՝ աղահովելով Սիրիայում ամենաերկարատեւ քաղաքական կայունությունը, եթե չհաշվենք 70-ական թթ. վերջը եւ 80-ական թթ. սկիզբը, երբ «Մուսուլման եղբայրների» խմբավորումը փորձում էր աղակայունացնել իրավիճակը մի շարք ահաբեկչական եւ խափանարար բռնարարքներով, որոնց հիմնական թիրախը բանակն էր, որը իսրայելա-եգիպտական հաշտության պայմանագրից հետո որդեգրել էր Թել Ավիվի հանդեպ ռազմավարական հավասարակշռության հասնելու ուղեգիծը: Սիրիայի նախագահի վճռական քայլերի շնորհիվ վիժեցվեց այդ գործունեությունը:

Արտաքին քաղաքականության ոլորտում որն Ասադն առհասարակ որդեգրել է հակասիոնիստական քաղաքական ուղեգիծ: Այդ ուղղությամբ նա պայքարում է հանուն արաբա-իսրայելական հակամարտության արդար եւ համապարփակ կարգավորման, պաղեստինցիների ինքնորոշման իրավունքի եւ համաարաբական համերաշխության եւ միասնականության: 1975 թ. Լիբանանում քաղաքացիական պատերազմի սկսվելուց հետո նախագահ Ասադը մեծ դեր է ունեցել այնտեղ արյունահոսությունը դադարեցնելու գործում, ինչպես նաեւ կարողացել է ծախողել լիբանանա-իսրայելական «մայիսի 17-ի» համաձայնագիրը 1983 թ.: Նա դասալարել է Իրան-իրաքյան պատերազմը, ապա դարձել է Իրանի ռազմավարական դաշնակիցը՝ առաջին հերթին հաշվի առնելով դրա հակակշռումը հարեւան Թուրքիային: Իսկ Ֆուվեյթյան ճգնաժամի ընթացքում ճնշադասել է Բաղդադի դիրքորոշումը եւ դիրքավորվել հակաիրաքյան ճամբարում՝ դրանով իսկ Սիրիային հեռու պահելով բազում վտանգներից, ինչպիսին կարող էին լինել տնտեսական շրջափակումը եւ այլ պատժամիջոցներ:

Անկյունաքարային քայլերից էր Դամասկոսի մասնակցությունը 1991 թ. Մադրիդում սկսված խաղաղության ժողովին, որի հիմքում դրված էին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 242, 338 եւ 425 որոշումները՝ «Հող՝ խաղաղության դիմաց» սկզբունքը: Բայց, ինչպես հայտնի է, 1996 թ. սկզբներից դադարել են Թել Ավիվի բանակցությունները սիրիական եւ լիբանանյան շավիղների վրա, մանավանդ Իսրայելում իշխանության եկած աջակողմյան «Լիկուդի» կարծր կեցվածքի պատճառով: Այս ծիրում Դամասկոսի համար ընդունելի չեն պաղեստինյան եւ հորդանանյան շավիղների վրա արձանագրված անջատ համաձայնագրերը:

Հաֆեզ Ասադն այն առաջնորդներից է, որ միշտ գերադասում է համազգային ռազմավարական շահը: Այս առումով նա անցյալ տարվա աշնանը հմտորեն տաղալեց դրսից սաստարված թուրքական իշխանությունների եւ հատկապես բանակի ռազմատենչ մտադրությունը Սիրիայի նկատմամբ: Այլ հարթության վրա՝ ի զարմանս շատերի, նա մեկնեց Մոսկվա՝ ցավակցելու թագավոր Հուսեյնի մահվան կապակցությամբ՝ նոր էջ բացելով նրա որդու՝ Աբդուլա II թագավորի հետ, չնայած նախորդ տարիներին գոյություն ունեցած երկկողմ լարված հարաբերություններին: Եվ ի վերջո, նախագահ Ասադը, իբրեւ ԱՄՆ-ի հակակշիռ, խրախուսում է Եվրամիությանը՝ ավելի գործուն մասնակցություն ունենալու միջինարեւելյան խաղաղ գործընթացում: Միավասիկ, սիրիացի բարեկամ ժողովուրդն այնքիսի նախագահ վերընտրեց, որը 70-ական թթ. վերջերին պատշառական այցով եղել է Երեւանում:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

# «Թուրքիայի հասարակությունը պատրաստ է Հայաստանի հետ նորմալ հարաբերությունների»

*Հավատում է թուրք-հայկական բիզնեսի զարգացման հանձնաժողովի նախագահ Քաան Սոյամը*

**– Դուք դարձել եք թուրք-հայկական բիզնեսի զարգացման առաջամարտիկներից մեկը, եւ ինչպես վկայում են թուրքական մամուլից ստացված լուրերը, ժամանակ առ ժամանակ հանդիպում եք ռեակցիոն ուժերի դիմադրությանը: Դանա՞խ եք ճնշման ենթարկվում:**

– Տարիներս առաջ այդ ճնշումը կար, բայց հիմա արդեն չկա: Ամեն դեպքում, որեւէ քաղաքական ուժի բացահայտ ճնշումներ չենք զգացել, նույնիսկ կրոնական կամ ազգային ծայրահեղականների հետ հանդիպումներում:

**– ՀՀ նախորդ իշխանությունների բացահայտ դրական վերաբերմունքը հայ-թուրքական մերձեցման հարցում ակնհայտ էր: Ինչպիսի՞ն է, ձեր կարծիքով, ՀՀ ներկայիս իշխանության վերաբերմունքը:**

– Պետք է խոստովանել, հատկապես վերջին երկու ամիսներին նկատելի է համարյա այն նույն մակարդակի աջակցությունն ու խրախուսումը, ինչը կար Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության օրոք: Ամեն դեպքում, մեր քայլերի վրա բավականին ազդեցություն ունի երկու երկրների ներքին քաղաքականությունը, եւ այս պայմաններում մենք պիտի աշխատենք անել առավելագույն հնարավորը՝ կապերը չխզելու համար: Արդեն մեկուկես տարի է, մենք շաբաթական երեք անգամ Հայաստանի մասին տեղեկություն ենք տարածում Թուրքիայի 100 տարբեր կազմակերպություններին, նախարարություններին, պետական մարմիններին ու առանձին բիզնեսմեններին:

**– Բիզնեսմեններ փոխադարձ շահերը հասկանալի են, բայց պատրա՞ստ է արդյոք Թուրքիայի հասարակությունը Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացմանը:**

– Տարիներս առաջ այդ դիմադրողականությունը կար, բայց արդեն վերջին ամիսներին ավելի ջերմ են մոտենում այդ հարցին: Ինձ թվում է, որ Թուրքիայի հասարակությունը այսօր պատրաստ է եւ ավելի նորմալ է ընդունում դա: Օրինակ, տարիներս առաջ, երբ խոսվում էր Հայաստանի գործարարների պատվիրակության այցի մասին, այդ տեղեկությունը մեկնաբանվում էր թուրքական թերթերի առաջին էջերում: Այսօր այնքան անհետաքրքիր է դարձել այդ նյութը, որ դիտվում է որպես սովորական երեւույթ, ինչպես, օրինակ, անգլիացիների, ամերիկացիների կամ ռուսների այցը: Իսկ Հայաստանի լրատվական միջոցներին իմ խնդրանքն է՝ Հայաստանի հասարակական կարծիքում հնարավորինս դրական կերպար ստեղծել Թուրքիայի նկատմամբ:

**– Դուք նախաձեռնել եք Աղքամար վանքի վերանորոգումը, ի՞նչ խորհուրդ ունի այն թուրք բիզնեսմենի համար:**

– Ավելի շատ, մեր երկու ժողովուրդների համատեղ պատմությունն օգտագործելով, տուրիզմի բիզնեսը զարգացնելն է: Տվյալ դեպքում խոսքը միայն Աղքամարի մասին չէ, նրան պետք է հաջորդեն այլ պատմական հուշարձաններ: Վանքի վերանորոգումն արդեն սկսվել է, տարբեր աղբյուրներից հայտնվել է մեկ մլն դոլար, մնացած գումարը լրացնելու է Ստամբուլի, առեւտրի պալատը:

**– Հայտնի է, որ դուք դիմել եք ամերիկացի պատվիրակներին՝ տեղեկություններ ստանալու վանքի ճարտարապետության վերաբերյալ: Ինչո՞վ բացատրել վերանորոգման աշխատանքներում հայազգի ճարտարապետների բացակայությունը, չէ՞ որ եթե վանքի վերանորոգման աշխատանքները սկսած ուղղությամբ ընթանան, վնասաբեր կլինեն հազարամյա այդ շինության համար:**

– Մենք մինչեւ հիմա Հայաստանից չենք ստացել վանքի վերանորոգմանը մասնակցելու ցանկություն ունեցող ճարտարապետների անունները: Մինչդեռ թուրքական կողմից արդեն պատրաստ է մասնակիցների ցուցակը, եւ աշխատանքները սկսվել են: Սպասում ենք նաեւ սփյուռքի օժանդակությանը:

**– Ի՞նչ տեղեկություններ կարող եք տալ Հայաստանում գործող թուրք առեւտրականների ու գործարարների մասին:**

– Թուրքական մի քանի ֆիրմաներ Հայաստանում առեւտրական գործունեությամբ են զբաղված, այդ թվում եւ «Քալբերյոը», եւ մենք աջակցում ենք նրանց: Հուսով ենք, որ նրանք ավելի կընդլայնեն իրենց գործունեությունը Հայաստանում: Բայց մեր նպատակը Հայաստան ավելի խոշոր քաղաքական ընկերություններ բերելն է, որոնց համագործակցությունը Հայաստանի հետ կարող է ընդգրկել ոչ միայն Հայաստանը, այլեւ Միջին Ասիան, ԱՊՀ մյուս երկրները:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

«ՎԱՇԻՆԳՏՈՆ ՓՈՍՏ»

# Ռուսաստանի պաշտպանական համակարգը՝ վտանգավոր վիճակում

Չորեքշաբթի օրը Միացյալ Նահանգները հայտարարել է, թե խիստ մտահոգված է միջուկային հարձակման նախնական ծանուցման ռուսական համակարգի վատթարացած տեխնիկական վիճակով եւ պահանջել է շտապ պատասխանել այս ոլորտում համագործակցելու իր երկրի առաջարկին: «Վաշինգտոն փոստ» թերթի համաձայն, Ռուսաստանն այժմ ունի ընդամենը երեք նախազգուշացնող արբանյակ, մինչդեռ ամբողջական ընդգրկման համար ինն արբանյակ է անհրաժեշտ: Օրվա 24 ժամից երեքը համակարգը գրեթե անգործության է մատնված եւ չի կարող հայտնաբերել ԱՄՆ հրթիռների հնարավոր հարձակումը: Եվ սա այն դեպքում, երբ Ռուսաստանի հրթիռային հրամանատարները չեն սպասում որոշելու, թե հրթիռային հարձակման մասին նախազգուշացնող ազդանշանը ճի՞շտ է, թե՞ կեղծ:

Պետդեպարտամենտի խոսնակ Ջեյմս Ռուբինի խոսքերով, «անկեղծորեն պետք է խոստովանել, որ ԱՄՆ-ը խիստ մտահոգ է բալիստիկ հրթիռների հարձակումը նախազգուշացնող ռուսական համակարգի հավանական փլուզումից»: Նա ավելացրել է, թե սխալ հաշվարկելու ռիսկը, սակայն նվազել է, քանի որ ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը այժմ չեն գտնվում խիստ տագնապալի վիճակում:

Նախագահներ Քլինթոնը եւ Ելցինը անցած սեպտեմբերին համաձայնության էին եկել՝ սկսելու հրթիռային հարձակման դեպքում նախնական ծանուցման եւ տեղեկատվության փոխանակման վերաբերյալ բանակցությունները, սակայն մինչ այժմ գրեթե ոչինչ չի արվել:

«Մենք խստորեն պահանջել ենք հետեւել այս համաձայնագրին՝ մանրամասները հետագայում համաձայնեցնելով Մոսկվայում բարձր մակարդակի հանդիպման ժամանակ: Ռուսական կողմի փորձագետներին հստակորեն ներկայացրել ենք, թե այս նախաձեռնությունը ինչ պտուղներ կտա: Սակայն մենք Ռուսաստանի ավելի մեծ ուշադրության եւ լրջության կարիքն ունենք», ասել է Ռուբինը:

«Վաշինգտոն փոստի» համաձայն, 1983 թ. սեպտեմբերին Խորհրդային Միության հրթիռային հարձակումը նախազգուշացնող համակարգը սխալ հաշվարկ էր արել, որը կարող էր կործանարար պատերազմի պատճառ դառնալ. համակարգը ամպերի վրա արեւի անդրադարձը որպես բենամու 5 հրթիռների անսպասելի հարձակում է ներկայացրել: Միայն երջանիկ պատահականությամբ արդեն համարժեք գործողության պատրաստ ռուսական կողմի հրթիռային ուժերի հրամանատարը մի փոքր հապաղել էր՝ ենթադրելով, որ հրթիռների թիվը խիստ փոքր է անսպասելի հարձակման համար:

Ռուսաստանը հնարավորություն չունի փոխելու շարքից դուրս եկած արբանյակները, իսկ անցած տարվա ապրիլից դադարեցրել է դրանցից մեկի աշխատանքը, գրում է թերթը:

ԱԲ. Ս.

# ՌԴ տարածքի կեսից ավելին բռնված է գրիպի համաճարակով

ՄՈՍԿՎԱ, 12 ՓԵՏՐՎԱՐ. ՆՈՅԱՆ ՏԱՐԱ... ԿԱՎԿԱՉՈՒԵՍ: ՌԴ 89 տարածքներից 53-ը բռնված են գրիպի համաճարակով: Մասնագետների կարծիքով, համաճարակը կանցնի Ռուսաստանի ավելի քան 60 տարածաշրջաններով: Համաճարակի սկզբից ... վել են մահվան դեպքեր: Պատ... թյան ինը սուբյեկտներում մահացել է 18 մարդ: Մահացողները հիմնակ... նում երեխաներն են եւ տարեց... դիկ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

# Մշակույթ

Այսօր անհահ բան է գիւղագիր լինելը: Դա մեր գրականութեան մէջ շատերը գիտեն: Տխուր է այս առումով Հրանդ Մաստոսեանի գրական օրինակը, որի ստեղծագործական միջավայրը՝ գրական ճմակուտը, առկայծ տաղանդի շնորհիւ դուրս եկաւ միութենական հետաքրքրութիւնների ոլորտ, սակայն հրաշալի գրողը մատուցման եղանակի երջագծից դուրս գալ չկարողացաւ եւ արդեն 15 տարուց աւելի է՝ ճգնաժամի մէջ է: Ի՞նչ է սա՝ փակուղի, թէ՞ օրինաչափութիւն: Այն ժամանակ, երբ խաղախրթութեան արեւմտեան արժէքները ջանում են ցոյց տալ շարժման նոր կեռմաններ,

Մկրտիչ Մարկոսեանը եկել էր Տիգրանակերտից՝ «մեր այդ կողմերից»: Վերջին միտքը հեռագնայ արտայայտութիւն է, որովհետեւ ունի ոչ միայն ծննդավայրի իր արքուն գիտակցութիւնը, այլեւ՝ ազգային պատմականութեան խորք, անցեալի մէջ հաւատական ապրեւածեւի «վաս բաղնուած» կարոտ: «Մեր այդ կողմերը» հայերէն ժողովածուի խորագիրն է, ուր ընդգրկուած են 23 պատմուածքներ, որն առաջին անգամ լոյս է տեսել 15 տարի առաջ Սամբուլում, 1984-ին: Նորութեայ նատուրալիստական յատկանութեամբ նա պարզապէս նկարում է իր ծննդարիս աշխարհը՝ առաջինն զգալով, որ այն կորուում, անհետանում է՝ եւ այն փրկելի է հարկաւոր:

Արդէն այդ նոյնականութիւնն էր կեանքի կոչել հայ գրականութեան մէջ 20-րդ դարի գրական հարուստ ենթաժանրերից մէկը՝ գեղարուեստական տարեգրութիւնը, ինչի շնորհիւ, եթէ գաւառը կամ գաւառացին հեռանում են, աղոտանում, այն վերստին պայծառանում է՝ այս անգամ գրականութեան մէջ: Այդ սկզբունքով են առաջնորդուել Վ. Թոթովենցը, Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Համաստեղը, Ա. Հայկազը, Բ. Նուրիկեանը, Յ. Ասատուրեանը: Իսկ վերջին տասնամեակում, ահա՛, եւ Մկրտիչ Մարկոսեանը: Հրաշալի մաղթանք-խոստովանութիւն ունի նա գրքի փոքրիկ նախաբանում՝ «Պատմուածքներուս մէջ, գրում է նա, մեր այդ կողմերը պատմեցի այնպէս, ինչպէս որ տեսած էի կամ այնպէս, ինչպէս որ ապրած էի: Հերոսները եւ իրենց անունները տուի նոյնութեամբ: Չուզեցի փոխել: Հիմա այդ հերոսներէն՝ այդ պաճուճներէն, էռնիներէն շատերը արդէն իսկ մեկնած են էնդի դէմը: Հիմա իրենց անունները՝ իրենց յիշատակը միչ մըն ալ թող ապրին այս տողերուն եւ այս գրքոյկին մէջ»:

Մաղթանքը նաեւ տագնապի արտայայտութիւն էր, որովհետեւ Մարկոսեանին հետաքնդում էր այն մտավախութիւնը, թէ եթէ «... գիւղագրութիւնը ինքնով վերջանայ, գաւառն ալ կը վերջանայ: Իսկ գաւառն արդէն կը վերջանայ»: Գաւառի հայկական ընչաւորութիւնը սպառուելու, տրոհուելու եւ մարելու էր: Դա ամէնից տխուր պատմական փաստն էր. կեանքի պայմաններից ելնելով գիւղացին լքում է ծննդավայրը եւ յայտնւում մեծ քաղաք Իսպանդուլում: Երեւոյթը նոր չէր, ի հարկէ, ամբողջ հայ գրականութեան մէջ հայրենալքութեան թեման կենսական է եղել եւ մնում է առայսօր: Եւ մի՞թէ հայրենալքութիւն չէ արդէն այն, որ հայ մարդը հայահոծ կենտրոններում անգամ՝ Սամբուլ, Մոսկուա, Լոս Անժելըս, Փարիզ լքում է հայերէնը՝ դառնալով բրախոս, անգլիախոս, ռուսախոս կամ այլախոս: Այսինքն՝ անունով, ծագումով միայն հայ: Աշխատանքով, հետաքրքրութեամբ, կենցաղով կամ ընթերցանութեան ջիղ երակով նա այլեւս ուրիշ միջտէականում է: Օտարանում է: Օտա՛ր է:

Մկրտիչ Մարկոսեանի պատմուածքների գիւղացիները հերոսներ են, քանի որ պատմական ծննդավայրում դիմակայող վերջին մեր մոհիկաններն են: Ճի՛շդ է, պարտուող, այսինքն՝ ծննդավայրը լքող, ի վերջոյ, բայց, նկատի ունեցէք, լքողների մէջ էլ վերջիններից են, որոնք կարողանում են տոհմիկ դիմագիծ եւ բարոյականութիւն պահել առայսօր նաեւ մեծ քաղաքներում:

# Համայնքի ամէնից երիտասարդ արշակագիրը

*Մկրտիչ Մարկոսեանը յայտնի եւ սիրուած անուն է: Նրան հաւասարապէս սիրում են հայ եւ թուրք ընթերցողները: Արձակագրի հայերէն եւ թուրքերէն ժողովածուները բռնել են ժամանակի ճնշումը կարճատեւ միջոցի մէջ արժանանալով մի քանի տպագրութիւնների: 1998 թուականի դեկտեմբեր ամսին Պոլսոյ հայ գրատէր հանրութիւնը շուքով նշեց սիրուած գրող Մկրտիչ Մարկոսեանի ծննդեան վաթսունամեայ յոբելեանը: Հանդիսութիւններին իրենց մասնակցութիւնը բերեցին շատերը, որոնց թւում յատկապէս դրա համար Երեւանից Սամբուլ հրաւիրուած բարբառագէտ Անահիտ Հանէեանը եւ դերասան Ռազմիկ Աբրահամեանը: Առաջինը խօսեց գրողի վաստակի, միջավայրի, գրական լեզուի եւ բարբառի իւրատեսակ սերտաճման, իսկ երկրորդը, ինչպէս նշում է տեղի մամուլը, կարողացել էր, յաղթահարելով բարբառի եզակի բարդոյթը, հաճելիօրէն զարմացնել գեղարուեստական խօսքի բնականութեամբ: Հանդիսութեան մասնակիցներին առանձնապէս հմայել էր «Թումասին աղջիկը» պատմուածքի բարձր մեկնաբանումը:*

գեղարուեստականութեան նոր փիլիսոփայական հիմնաւորումներ, կան գրողներ, որ Դոն Քիշոտի նման դեռ «յամառում են» ազգային հունի, նկարագրի աւանդական ածուներում:

Արեւմտահայ գրականութեան մէջ Խրիմեան Հայրիկը, Գարեգին Ասք, Արուանձտեանը, Թլկատինցին, Մշո Գեղամը, «Մեհեան» հանդէսի յայտնի կարգախօսը «բնագաւառի» գերադաս դերի մասին իրենց գործերով նաեւ ընդդիմութեան արտայայտութիւն էին խաղախային կեանքի պատկերման, համամարդկային զգացումների յարաճուն մուտքի դիմաց, երբ թւում էր, թէ ազգայինի աւազանը, կամ աւելի վաս՝ ենթահողը նահանջում էր: Գաղտնիք չէ, որ այդ մտահոգութեամբ տագնապեցին նաեւ Երուխանն ու Դանիէլ Վարուժանը՝ փորձելով գիւղական անչար պատկերների մէջ հայ կեցութեան փրկութեան հանգրուաններ մատնանշել: Ի՞նչ դուրս եկաւ: Յաջողուե՞ց: Կարծում ենք, այո՛, առնուազն աւելի լաւ, քան յետոյ եղաւ Հր. Մաստոսեանի արձակում, որովհետեւ վերջինիս միջավայրը տեսլական կառոյցի էր մօտենում, որովհետեւ այն գեղագիտական նոր, հակադիր կառոյցի որոնում էր աւելի շուտ, քան իրական աշխարհի յարաբերութեան ենթադիր: Հրանդ Մաստոսեանի հերոսները ակամայ ներհայեցողներ էին դառնում, հեռանալով սարսափելի իրականութեան ժխորային ուրուագծումներից: Գիւղը դառնում էր փախուստի իւրօրինակ դաշտ, գիւղը դառնում էր երազուած անիրականութիւն՝ մերժուած իրականութեան դիմաց, ճիշդ այնպէս, ինչպէս բնութիւնը՝ Համօ Սահեանի համար:

Սակայն նորագոյն գրականութեան մէջ այս իւրօրինակ նահանջը համաստուած չեղաւ: Յակոբ Մնձուրու կողքին, նրա գրական միջավայրում, նրա գրական ժայռամուտին յայտնուեց Մկրտիչ Մարկոսեանը: Անպայմա՛ն տաղանդաւոր արձակագիր, միտումի հեղինակներից, որի գեղարուեստական առաջադրութիւնը իրական գիւղի, իր ծննդավայրի մթնոլորտի, բարոյաբանութեան, բարբառի վերարծարծումն էր: Մի էական տարբերութիւն կար իր եւ Յ. Մնձուրու ստեղծագործական ներքին ներքնում. անհամեմատ երիտասարդ գրողը փնտրում էր իր տեսածը, իր «այսօրը», այն, ինչ հասել է հնից: Ուշադրութիւն դարձնենք, որ Յ. Մնձուրին երբեմն չէր հասցնում անցեալի պատմական արժեւորումից դուրս գալ, անգամ պատմուածքի գեղարուեստականութեան հասուն նա ազգագրական տարր էր մտցնում, ինչն, ի հարկէ, անհրաժեշտ էր, բայց գրական նշանակութիւնը ոչ միշտ դէպքերում ակամայ մղում էր երկրորդական պլան:

Մկրտիչ Մարկոսեանի ստեղծագործական տաղանդի շնորհիւ նա արդէն նիւթական է, հոգեբանութիւն է, շօշափելի խառնուածք:

Մ. Մարկոսեանը՝ պոլսահայ ամէնից երիտասարդ արձակագիրը, արդէն անկասկած դարձել է 60 տարեկան: Ուրախանում ենք եւ միաժամանակ տխրում: Ուրախանում ենք գրողի վաստակի, գրականութեան մէջ թողած յեսագծի համար: Սակայն ասուածի մէջ դառնագին հեգնանք կարելի է որսալ. մենք տխրում ենք արդէն այն բանից, որ նա մնում է ամէնից երիտասարդ արձակագիրը: հետեւողներ չկան, ինչքան էլ մենք գրականութեան հայ կալուածի սահմանին Գրիգոր Զohրապի «Այրի»ի հերոսուհիներից Զարդարի նման յամառենք սպասելու պոլսահայ գրական հին, նոր ու նորագոյն, առայսօր հարուստ շարժման նորայայտ անուն:

ՍՈՒՐԵՆ Դ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

Յունուար, 1999

ՀԱՄԱՌՕՏ

## Մոսկվայում եւ Երեւանում կստեղծվեն հայկական եւ ռուսական մշակույթի կենտրոններ

ԵՐԵՎԱՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Մոսկվայում եւ Երեւանում նախատեսվում է հիմնել մշակութային կենտրոններ, որոնք կնպաստեն ռուսական եւ հայկական համայնքների ամրապնդմանը Հայաստանում եւ Ռուսաստանում, փետրվարի 11-ին Երեւանում ՀՀ նախագահի հետ հանդիպումից հետո լրագրողներին հայտնեց Մոսկվայի կառավարության նախագահ Յուրի Լուժկովը: Ինչպես նշեց Յու. Լուժկովը, ՌԴ մայրաքաղաքի կառավարությունը շահագրգռված է, որպեսզի Մոսկվայի հայ համայնքը, որը ներկայումս կազմում է մոտ 450 հազար եւ անընդհատ աճելանում է, զարգացնի իր լեզուն եւ մշակույթը: Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բարեկամության դարավոր ավանդույթների շարունակման կարեւորության առնչությամբ Մոսկվայի քաղաքապետը նկատեց, որ Ռուսաստանի շատ ականավոր մարդիկ (օրինակ, մեծ զորահրամանատար Ա. Սուվորովը) հայկական ծագում են ունեցել:

## Սոցիալիստական ռեալիզմը վերադառնում է Հայաստանի նկարչի տուն

ԵՐԵՎԱՆ, 12 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի նկարչի տանը բացվելիք առաջիկա ցուցահանդեսը ներկայացնելու է նկարիչների միության ֆոնդերում պահվող այն աշխատանքները, որոնք պատկանում են, այսպես կոչված, «սոցիալիստական ռեալիզմին»: Մեր անցյալի վարպետները, ինչպես նաեւ այժմ գործող նրանց ժամանակակիցները ստեղծել են դարն ու նրա իրադարձությունները պատկերող շատ ստեղծագործություններ, որոնք նշանակալից երեւույթ են մեր կերպարվեստում, ասաց Հայաստանի նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը: Հիշենք, օրինակ, թե Հայրենական մեծ պատերազմին նվիրված թեմայով ինչքան ուշագրավ գործեր է նկարել կամ քանդակել մեզ նախորդած սերունդը, նշեց նա:

ՖՐԱՆՍԻԱ

## «Փարիզի Աստվածամոր տաճարը» հրաշք ներկայացում է

### Գլխաւոր դերասաններից երկուսը հայկական ծագում ունեն

Ֆրանսիական թատերական կյանքում խոշոր իրադարձություն է համարվում հանճարեղ Վիկտոր Հյուգոյի համանուն վեպի հիման վրա ստեղծված «Փարիզի Աստվածամոր տաճարը» երաժշտական թատերգությունը, որն արդեն չորս ամիս գերում է արվեստասեր հասարակությանն ինչպես բեմադրությամբ, այնպես էլ դերասանական կազմով: Ըստ Փարիզում հրատարակվող «Աշխարհ» մշակութային հասարակական երկլեզու երկշաբաթաթերթի փետրվարի 6-ի տվյալների, ամեն օր մոտ 4 հազար հանդիսատես ընդգրկում է այդ գլուխգործոցը: Ավելի քան 400 հազար հոգի արդեն հաղորդակցվել է այդ եզակի թատերական ներկայացմանը, որի բեմադրիչներն են Լուկ Պլամոնդոնը եւ երգիչ ու երգահան Ռիշար Կոչչիանտեն: Այդ առիթով թողարկված համաթատասխան CD ալբոմից վաճառվել է ավելի քան 2,5 մլն օրինակ: Սակայն հետաքրքրական է, որ ներկայացման դերասաններից երկուսն ունեն հայկական ծագում: Սին Ֆոբուսի դերակատար Պատրիկ Ֆիորիի հայրը կորսիկացի է, մայրը՝ մարսելահայ, իսկ Էսմերալդայի դերակատար Հելեն Սեգարայի հայրն իտալացի է, մայրը՝ հայ:

Երգարվեստի ասպարեզում հռչակված 27-ամյա այս գեղադեմ երգչուհին ծնվել է Վարում (Ֆրանսիա) եւ մանկուց երազել է դառնալ Բարբարա Ստրայզենդի կամ Բալավուանի նման հանրահայտ ասող: 15 տարեկանից սկսած մոտ տասը տարի երգել է Մարսելի երգանի բարերում եւ ռեստորաններում, ապա Փարիզ գնալով ծանոթացել է վաղամեռիկ երգչուհի Դալիդայի եղբոր Օրլանդոյի հետ, որի հովանավորությամբ էլ թողարկել է իր առաջին ձայնասկավառակը «Ես ձեզ սիրում եմ, ցտեսություն» խորագրով: Հաջողությունը չի հապաղել: Ավելի քան 250 հազար օրինակ է վաճառվել: Դրան հետեւել է երկրորդ ձայնասկավառակը՝ այս անգամ իտալացի կույր երգիչ Անդրեա Բոչելլիի ձայնակցությամբ: Հաջողությունն ավելի մեծ թափ է ստացել, ավելի քան 1 մլն օրինակ է վաճառվել «Ապրել նրա համար» խորագրով այս երկրորդ ալբոմից: Բացառիկ տաղանդի տեր եւ հարուստ ձայնային տվյալներով օժտված Հելենը դարձել է ֆրանսիական երգարվեստի ամենաճնշուած ասողը: Նրա գեղեցիկ դիմագծերն ու կատարողական արվեստի աստվածատուր շնորհը լրացնում են կատարյալ ասող դառնալու բոլոր պահանջները: Վերջերս «France-2» հեռուստակայանի լրագրող Միշել Դրուքերը նրա հաջողության գաղտնիքը վերագրել է «նրա իտալա-հայկական արմատներին»: Այդ հարցազրույցի ընթացքում, ի դեպ, երգչուհին քանիցս հիշեցրել է իր հայկական ծագման եւ արմատների մասին: «Սեւ հայրս ասել էր, որ սեւ հաց ուտելուց հետո մի օր էլ սպիտակ հաց եմ ճաշակելու», նշել է Հելեն Սեգարան, որը, ըստ լրատվության, հակառակ իր հաջողություններին, դեռեւս պահպանում է իր համեստությունն ու ընտանեկան արքության արժեքները: Արվեստագիտուհին անցյալ նոյեմբերին հրապարակ է հանել «Իտալանդիայի հովիտները» վերնագրով իր նոր CD ալբոմը եւ պատրաստվում է համերգներով հանդես գալ Կանադայի Մոնրեալ քաղաքում:

Հ. Ե.

digitised by A.R.A.R.@

# Մարզական

ԵՐԵՎԱՆ

## Մարզական լրագրողների ֆեդերացիայի կոնֆերանսը

Երեկ ՀՀ սպորտվարչության նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրապետության մարզական լրագրողների կոնֆերանսը, որին մասնակցեցին Երեւանի, Գյումրիի եւ Վանաձորի լրագրողները: Բացման խոսքում Լեւոն Անանիկյանը համառոտ ծանոթացրեց Ֆեդերացիայի ստեղծման պատմությանը: Նա մասնավորապես ասաց. «Մարզական լրագրողների Ֆեդերացիան ընդհանուր առմամբ հիմնվել է 80-ականների վերջին, բայց առաջին պաշտոնական կոնֆերանսը տեղի է ունեցել 1993 թ. հոկտեմբերին: 1994 թ. մարտին անցկացվել է նաեւ արտահերթ կոնֆերանս: Ըստ կանոնակարգի, չորս տարի անց Ֆեդերացիայի նախագահ Սամվել Սուրադյանը պետք է նոր հաշվետու-ընտրական կոնֆերանս հրավիրեր: Իրականում դա չի արվել: Որոշեցի էլ ավելի չուշանա այդ գործընթացը, մարզական լրագրողներից կազմված աշխատանքային խումբ ստեղծվեց, որն էլ զբաղվեց Ֆեդերացիայի հերթական կոնֆերանսի կազմակերպմամբ»: Օրակարգում երկու հարց էր դրված. 1. հաշվետվություն, 2. ընտրություններ:

Հաշվետվությամբ այդպես էլ ոչ ոք հանդես չեկավ: Ֆեդերացիայի նախագահ Ս. Սուրադյանը բացակայում էր, իսկ ելույթներով հանդես եկան նրա տեղակալները Զ. Վարդանյանն ու Ս. Բաղդասարյանը: Նրանք նշեցին, որ Ֆեդերացիան վերջին չորս տարվա ընթացքում անգործության էր մատնված: Դա նրանք բացատրեցին Ֆեդերացիայի նախագահի եւ գործկոմի միջեւ փոխհարաբերությունների բացակայությամբ: Լրագրողները Ֆեդերացիայի աշխատանքն անբավարար գնահատեցին:

Մինչ օրակարգի երկրորդ բաժնին անցնելը մասնակիցները մի շարք առաջարկություններ արեցին, վեր հանեցին տարբեր հարցեր: Նրանք կարեւորեցին Ֆեդերացիայի նշանակությունը, նշելով, որ այն պետք է համախմբի մարզական թեմայով գրող լրագրողներին, ինչը կնպաստի հայկական սպորտի լուսաբանման գործին:

Այնուհետեւ մասնակիցները թեկնածուներ առաջադրեցին նոր նախագահ ընտրելու համար: Դրանք յոթն էին: Սակայն նրանցից չորսն ինքնաբացարկ հայտարարեցին: Նախագահի ընտրությունը փակ գաղտնի քվեարկությամբ անցկացվեց: Ձայների մեծամասնությամբ մարզական լրագրողների Ֆեդերացիայի նախագահ ընտրվեց սպորտվարչության լրատվական ծառայության պետ Յուրի Ալեքսանյանը: Վերջում, արդեն բաց քվեարկությունով, կազմվեց գործադիր կոմիտե, որի կազմի մեջ մտան 11 լրագրողներ. Յուրի Ալեքսանյան, Լեւոն Անանիկյան (ազգային ռադիո), Արսեն Բաբայան («Մարզադաշտ»), Սուրեն Բաղդասարյան («Ֆուտբոլ+»), Ալլոա Խաչատրյան («Սնարք»), Աշոտ Հակոբյան («Առավոտ»), Սիմոն Հակոբյան (ԱՐ հեռուստաընկերություն), Նաթելա Հովասափյան (սպորտվարչության լրատվական ծառայություն), Աշոտ Մարտիրոսյան («Ֆուտբոլ+»), Սլավա Սարգսյան (ազգային հեռուստատեսություն), Զավեն Վարդանյան (Արմենպրես):

Հուսանք, որ Ֆեդերացիայի նորընտիր կազմը ակտիվ ու գործուն կլինի:

ԹԵՆԻՍ

## Անդրե Ագասին որակազրկեցին...

Այս օրերին պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) երեք խոշոր մրցաշար է ընթանում:

Դրանցից ամենաուժեղ կազմն ունի Սան Խոսե քաղաքում անցկացվող մրցաշարը: Որքան էլ տարօրինակ է, մրցանակային հիմնադրամն այստեղ ամենացածրն է՝ 325 հազար դոլար: Տեւական ընդմիջումից հետո Սան Խոսեում խաղում է աշխարհի թիվ մեկ թենիսիստ Փիթ Սամփրասը: Ակնատեսները նշում են, որ ամերիկացին բավականին թարմացած տեսք ունի ու թեթեւ է խաղում: Սամփրասը երրորդ շրջան է դուրս եկել. նա նախ պարտության մատնեց Բլանկոյին (6-4, 6-4), ապա՝ Ռոդրիգեսին (7-5, 6-3): Ուժեղագույններից պայքարը շարունակում են նաեւ Ֆիլիպուսիսը, Վուդվորֆը, Գիմելսթոդը, Չանգը, Կարբախերը, որոնք հաղթել են համապատասխանաբար վան Լոումին (6-2, 6-1), Դելգադոյին (6-2, 6-3), Վուդրուֆին (6-4, 7-6), Սիլարիին (6-4, 7-6), Լարոյին (6-3, 6-7, 6-3):

Սան Խոսեի խաղադաշտում բոլորի համար անսպասելի մի դեպք տեղի ունեցավ: Աշխարհի ուժեղագույն թենիսիստներից մեկը՝ Անդրե Ագասին, որը մրցաշարի հաղթողի կոչման հիմնական հավակնորդներից էր, դուրս մնաց պայքարից: Նա առաջին շրջանում հետեւությամբ (6-2, 6-1 հաշվով) հաղթեց ավստրալացի Թոդ Վուդբրիջին, իսկ երկրորդ խաղն անցկացրեց

ֆլերին հայտնի ամերիկացի թենիսիստ Սիսի Մամիտի հետ: Հանդիպումը տարօրինակ ստացվեց. առաջին խաղափուլում Անդրեն պարտվեց «չոր»՝ 0-6 հաշվով: Իսկ երկրորդում, երբ հաշիվը 6-6 էր, մրցավարները դադարեցրին խաղը եւ պարտություն գրանցեցին Ագասիին: Հետո մեկնաբանները նշեցին, թե նա վիճում էր մրցավարի հետ, հայհոյում... Անվայել վարքի համար թենիսիստը որակազրկվեց:

Այս մրցաշարում մեր Սարգիս Սարգսյանի բախտը չբերեց: Հենց առաջին խաղում նա հանդիպեց շատ ուժեղ թենիսիստի՝ ավստրալացի Մարկ Ֆիլիպուսիսի հետ: Առաջին խաղափուլը Սարգիսը շահեց (7-6), սակայն մյուս երկուսում պարտվեց (5-7, 3-6) ու դուրս մնաց հետագա պայքարից:

Մեկ այլ մրցաշար անցկացվում է Սանկտ Պետերբուրգում (մրցանակային հիմնադրամն այստեղ 340 հազար դոլար է): Կազմակերպիչներին չհաջողվեց շատ ուժեղ կազմ հավաքել, սակայն խաղերը բավականին հետաքրքիր են անցնում: Այստեղ քառորդ եզրափակիչ մտած թենիսիստների թվում են «դաշտի տերեր» Մարատ Սաֆինն ու Իգոր Կոնդրատյեւը, զվեյցարացի Մարկ Ռոսսեն, սլովակ Դոմինիկ Հրբատին:

Դուբայում անցկացվող մրցաշարն ամենահարուստն է (հիմնադրամը՝ 1 մլն 150 հազար դոլար): Այստեղ հատկանշականն այն է, որ պայքարից դուրս են մնացել հեղինակավոր թենիսիստներ՝ իսպանացիներ Ալեխս Կորետխան, Ալբերտո Կոստան, անգլիացի Գրեգ Ռուսեդսկին, չեխ Պետր Կորդան:

ՖՈՒՏԲՈԼ

## Ութ թիմերի մասնակցությամբ

Փետրվարի 22-28-ը Իսպանիայի Գրանադա քաղաքում կանցկացվի մինի ֆուտբոլի եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլը:

Մրցումները կընթանան մի քանի փուլով: Առաջնության ութ մասնակիցները նախ կմրցեն երկու խմբերում, որտեղ հաջող հանդես եկած հավաքականներն այնուհետեւ կշարունակեն պայքարը մեդալների համար:

Խմբերից մեկում ընդգրկված են Իտալիայի, Բելգիայի, Պորտուգալիայի, Ռուսաստանի, մյուսում՝ Իսպանիայի, Հոլանդիայի, Հարավսլավիայի, Խորվաթիայի հավաքականները: Համընդհանուր կարծիքով, այս խումբն ավելի ուժեղ է, քան առաջինը, իսկ չեմպիոնի կոչման առավել հավանական թեկնածուն է համարվում Իսպանիայի ընտրանին: Պետք է կարծել, որ մյուս թիմերը համաձայն չեն այս կարծիքի հետ եւ կպայքարեն ամենաբարձր տեղի համար: Իսկ ուսները պարզապես հայտարարում են, որ իրենք Գրանադա են մեկնում միայն առաջին տեղ գրավելու նպատակով:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է
ՈՍԶՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

# ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌ

ՃԻՇՏ ԼՈՒԾԵԼՈՎ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԸ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՌԱՋԻՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՎ «ԱԶԳ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐՈՂ ԵՔ ՍՏԱՆԱԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ:



### Ուղղահայաց

1. Անասնաբուծական մեծ տնտեսություն: 2. Պուշկինի հերոսուհիներից: 3. Սփյուռքահայ նկարիչ: Հայաստանի պետական պատկերասրահում է գտնվում նրա «Նկարչի կնոջ դիմանկարը» կտավը: 4. Անգույն, անհոտ, ջրածնից թեթեւ գազ: 5. Շ. Թաթիկյանի «Բալենի» վեպի հերոսներից: 6. Հունական դիցաբանության մեջ քաջ եւ հսկա կույր որսորդ, որը հայկական դիցաբանության մեջ նույնացված է աղեղնավոր Հայկի հետ: 10. Դյումայի հերոսուհիներից, թագուհի: 11. Ամերիկյան կոշիկի ծանոթ ֆիրմա: 15. Հայ գրող: 16. Քաղաք Ճապոնիայում: 17. Մրցատարեզ: 18. Գրական ժանր: 23. Անձին լիազորություններ տվող փաստաթուղթ: 24. Թերմոդինամիկական ջերմաստիճանի միավոր: 25. Իտալացի աշխարհահռչակ կինոռեժիսոր: 29. Հին Եգիպտոսի թագուհի: 30. Եկատերինայի ֆավորիտը: 32. Գազարի, մասուրի, չիչխանի մեջ պարունակվող դեղնանարնջագույն պիգմենտ: 33. Թաղիքե երկարածիս ոտնաման: 35. Կանացի անուն: 36. Գերմանացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր: 38. Երաժշտական հնչյունի որակային հատկանիշ: 39. Քաղաք Իրանի հարավում, որը վերջերս ենթարկվեց անգլո-ամերիկյան զորքերի հրթիռակոծության: 45. Մահմեդական երկրներում գերագույն տիրակալի տիտղոս: 46. Երաժշտա-բանաստեղծական ստեղծագործություն: 47. Ֆրանսիացի քանդակագործ, նկարիչ, իմպրեսիոնիզմի հիմնադիրներից: 51. Քաղաք Հայաստանում: 52. Արտային դեղամիջոց: 53. Շախմատային ֆիգուր: 54. Շիտաբարված, չվնասված: 55. Սիրած կնոջ պատուհանի տակ կատարվող սիրային երգ: 56. Աբնում հորիզոնական հարթակի վրա ընկած մարդու կամ որեւէ առարկայի պատկեր, արտացոլանք: 60. Սեր եւ գեղեցկություն խորհրդանշող ծաղիկ: 61. Նար-Դոսի նվվելի հերոսը, որին սիրած աղջիկը գրել էր. «...Սենք վերեւն ենք, դու ներքեւը: ...Մոռացիր ինձ»: 64. Ծաղիկ, երգում: 65. Փոքրիկ, հարթ տարածք: 67. Ռուսաստանում ազնվականական, իշխանական տիտղոս: 68. Ըստ Աստվածաշնչի Ադամի անհնազանդ կինը:

### Հորիզոնական

7. Հայոց թագուհի, որը սիրահարված էր Թորոս Ռոսլինին: 8. Հավերժական սիրո մարմնացում հերոսուհու կերպար Շեքսպիրի մի ստեղծագործության մեջ: 9. Ո՞ւմ է սիրահարված իտալացի մեծ բանաստեղծ Պետրարկան, որի բանաստեղծությունները կնոջ եւ բնության գեղեցկությամբ արբած մարդու ապրումներ են: 12. Հայ զորավար, որը հայկական եւ եթովպիական զորքերի գլուխն անցած մասնակցել է Տրոյական պատերազմին: 13. Եվրոպայում ծարտարապետության մեջ ընդունված ոճ: 14. Քաղաք Հյուսիսային Իտալիայում, պրոլետարիատի կենտրոն: 19. VII դ. հիմնադրված կրոնա-մշակութային կենտրոն Վանից հյուսիս-արեւելք: 20. Կոմպոզիտոր, մանկավարժ. նրա եւ կնոջ անուններով են կոչվում Մոսկվայում երաժշտական մանկավարժական ինստիտուտը եւ ուսումնարանը: 21. Ըստ Աստվածաշնչի սուրբ հոգուց հղիացած տիրամայր: 22. Ամերիկացի աշխարհահռչակ բասկետբոլիստ: 26. Իր, որի կորելու պատճառով սիրած կնոջը խեղդեց Օթելոն: 27. Ռուսաստանի կայսրուհի, որի օրոք Դրիմը միացվեց Ռուսաստանին: 28. Դանթեի վաղ շրջանի ստեղծագործությունները նվիրվել են սիրած կնոջը: Ո՞վ էր նա: 31. Հիսլերի անունը: 34. Կոմիտասի ստեղծագործություններից: 37. Ըստ ավանդության, թագուհի, որը հայոց արքային տիրանալու համար պատերազմեց նրա դեմ: 40. Ո՞վ էր Պոլյոմկինը Եկատերինայի համար: 41. Ծաղկահարդարման արվեստ Ճապոնիայում: 42. Քնարով եւ նեռ աղեղով պատկերված հունական աստված, որին մշտապես ուղեկցել են մուսաները: 43. Հոլիվուդի դերասանուհի, աստղ: Կլեոպատրիայի դերակատարուհին: 44. Որսորդության, պղպաքերության աստվածուհին հռոմեական դիցարանում: 47. Ամերիկյան հանրածանոթ դերասանուհի, աստղ («Սիրունիկը»): 48. Ռուս տաղանդավոր դերասան, երգիչ-երգահան: 49. Բնության, գարնան գարթոնքի աստվածուհին հռոմեական դիցարանում: 50. Իտալական գեղանկարչական դպրոցի հիմնադիրներից (XIII դ.): 57. Սիրած կնոջ մահից հետո, ի հիշատակ նրա, Շահ Ջահանը Հնդկաստանի Ագրա քաղաքի մոտ կառուցեց տաճար: Ինչ անուն ունի տաճարը: 58. Իտալացի հայտնի մոդելյոր: 59. Սիրո, երիտասարդության, ամուսնական զույգերի հովանավոր կաթոլիկ քահանա, որին գլխատել են, ապա սրբացրել: 62. Արեմիս աստվածուհուն նույնացված աստվածուհի հայոց դիցարանում: 63. Նախաբրիտանական շրջանից եկած կրոնական, ժողովրդական ավանդական տոն: 65. Կին, որին առեւանգելը պատճառ դարձավ Տրոյական պատերազմի: 66. Գարնան, ծաղկունքի, արգասաբերության, գեղեցկության աստվածուհին հռոմեական դիցարանում: 69. Անգլիական դետեկտիվ ժանրի կինոնկարներում արդարադատ քննիչի կերպար: 70. Մեսագի վրա փորագրության տեսակ: 71. Ընկույզով քաղցրավենիք: 72. XVIII դ. Անգլիայում ուսանողների կողմից հիմնադրված կրոնա-քարոյական հոսանքի կողմնակից: 73. Ըստ ավանդության կին, որին սիրող տղան ամեն գիշեր Վանա լճի ջրերը ճողփելով, հասել է նրան: Ո՞վ էր այդ կինը: 74. Պոլսահայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ Զաքել Ասատուրի գրական անունը:

Կազմեց Է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

### Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

**Ուղղահայաց.** 1. Իխտիանդր: 2. Արավ: 3. Տանձենի: 4. Օկինավա: 5. Գրչակ: 6. Թոթովենց: 10. Սմիրդովլաթ: 11. Սեֆիստոֆել: 15. Փանդիր: 16. Դարվին: 20. Թոբակառու: 22. Առաջնորդ: 23. Թեմերեյ: 24. Գրենոբլ: 28. «Դավիթ»: 29. Սցենկ:

**Հորիզոնական.** 7. Սխմատովա: 8. Կուրյատով: 9. Բարձվենյակ: 12. Խնամ: 13. Անդովկ: 14. Սելեբ: 17. Ցորդան: 18. Ցալինցի: 19. Եթովպիա: 21. Միկոյան: 25. Իբսար: 26. Մեդորա: 27. Կեռան: 30. Մակեդոնացի: 31. Հոլիսիմե: 32. Բրեդերի:

digitised by A.R.A.R.@

## ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը (USAID), կրթական զարգացման ակադեմիան (AED) եւ Sibley International-ը

*տեղեկացնում են*

տնտեսական թեմաներով գրող լրագրողներին, որ «Անցման շրջանի տնտեսությունների հիմնախնդիրները» զեկուցումների շարքի հերթական հանդիպումը կկայանա **փետրվարի 15-ին, ժամը 11:30-ին** Թեֆեյան մշակութային կենտրոնում *(Խանջյան 50)*:

Հանդիպումը կվարի Առեւտրի համաշխարհային կազմակերպության գլխավոր խորհրդական **Անդրե Վագները**:

Հանդիպմանը կմասնակցի Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության ՏԱՍԻՍ ծրագրային գրասենյակի գործադիր տնօրեն **Արայիկ Հակոբյանը**:

*Թեման՝* **«Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի անդամակցության գործընթացը»**:



KalTrade (Swiss),S.A
Armenia Division

**Առաջարկում ենք բարձր որակի ալյուր՝ "Harvest"**
**1 կգ - 143 դրամ:**

**Երեւան, Մոսկովյան 24-6, հեռ./ֆաքս 524 343, 526 444**



EMS EHSAL

## Master of Business administration Միջազգային ճանաչում ունեցող դիպլոմ

Եվրոպական համագործակցության կրթական համակարգի շրջանակներում EHSAL (Բրյուսել, Բելգիա) բարձրագույն ուսումնական հաստատությունը իրականացնում է տնտեսագիտական բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստման International MBA-ծրագիրը, որին կարող են մասնակցել ավարտական կուրսերի ուսանողները, բուհերի շրջանավարտները, մագիստրատուրայում սովորողները:

*Ուսման տեւողությունը՝ 1 տարի:*
*Տեղեկությունները՝*
***25-51-52, 53-69-01** հեռախոսահամարներով:*
*Հասցեն՝ **Բաբայան թիվ 10/1, «VV» կենտրոն***



**Փնտրվում է**

1 կամ 2 սենյականոց վարձով բնակարան Երեւանի որեւէ թաղամասում՝ կահավորված եւ հեռախոսով:

Զանգահարել 24-71-29:



**ՎԱՃԱՌՎՈՒՄ է**

**եռահարկ, փոքրիկ այգով ,սեփական տուն Մոնումենտում (առանց ներքին հարդարման):**

*Զանգահարել՝ 58-33-26, ժամը 18:00-23:00:*


# ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ

## 13 փետրվար

**1**

10.00 Հայլուր
10.20 Սարը եւ բնությունը
10.50 Հեռուստասերիալ «Կաթիսան Թենիսը» (5-րդ սերիա)
11.15 Լիամետրաժ մուլտֆիլմ «101 դալմատինցներ»
12.35 Մենդելսոն. «Կոնցերտ ջութակի եւ նվագախմբի համար»
13.05 Գ/Ֆ «Կրկեսի արքայադուստրը»
15.30 Մանկության մոլորակ
16.00 Հողը եւ ջուրը
16.25 Սարգաշխարհ
17.00 Հայլուր
17.20 Ոսկեհորիկ
17.50 Գ/Ֆ «Հովազածորի գերիները»
18.50 Ազգարար
19.15 Խորան լուսո
19.25 Կարծիք
20.00 Հայլուր
20.40 Երաժշտական տեսադարան
20.50 Անեկդոտների տասնյակ
21.00 Ջինուժ
21.35 Բոհեմ
22.15 Ինչ կա, չկա
22.45 Գ/Ֆ «Եռակի հարված»
00.00 Հայլուր
00.15 Ֆիլմի շարունակությունը

**ԱՐՄԵՆԻԱ**

11.30 Մուլտֆիլմ
11.50, 12.30, 14.50 TV խանութ
12.00 24 կարդ վայրկյանում
13.40 Գեղարվեստական ֆիլմ
15.05 Արացրվում
15.45 Գեղարվեստական ֆիլմ
17.00 Հացի խնդիր
17.20 Կենդանի աշխարհ
17.40 Նանոր-տոու
18.10 Գեղարվեստական ֆիլմ
20.15 Մեր խումբը
20.55 Հեռուստասերիալ «Տարօրինակ դեպքեր»
21.15 Պեգաս
22.40 Համերգ
23.00 Օրը
23.40 Գեղարվեստական ֆիլմ

**2**

11.00 Սուրհանդակ (կրկնություն)
11.35 Առավոտյան մարգանիտ
12.10 Մուլտֆիլմ «Ոսկին Հուդ»
13.35 Ոչ նշանավոր մարդկանց կյանքը
13.50 Ջեյմս Բլունդի «Գաղտնի գործակալ Ռայսը» ֆիլմում
15.20 Հրադարակ
15.30 «03» բժիշկներ եւ հիվանդներ
15.50 Գ/Ֆ «Նայթմենը»
17.15 Հմայիլ
18.00-19.00 Ընդմիջում
19.00 Մուլտեր
19.30 Սուրհանդակ
19.45 Ընտանեկան ֆիլմ. «Կոբի Դիկ» (II մաս)
21.30 Սուրհանդակ
22.00 Շաբ ու փորձանք
22.15 Հեռագիծ
23.05 Սնիմ. Խաչիկ Կարապետյան
23.30 Սուրհանդակ
00.00 Անդրադարձ

## 13 փետրվար

00.10 Գանձերի կղզին (V-VI մասեր)
00.30 Օլյայի օրագիրը
00.40 Սուլթ սենյակ
01.00 Գ/Ֆ «Հաջողության ջենթլմենները»
02.30 Սուրհանդակ

**1**

9.00 Գ/Ֆ «Հավատարմություն»
10.25 Տնային գրադարան
10.45 Հոգեւոր հովվի խոսքը. Միտրոպոլիտ Կիրիլ
11.00 Նորություններ
11.30-11.45 Բիզնես TV
16.00. Նորություններ
16.45. Հոկեյ. Եվրալիգայի եզրափակիչ խաղեր «Դինամո» (Մոսկվա)-«Իլվես» (Ֆինլանդիա)
(16.55 Մուլտֆիլմ «Իկարուսն ու Իմաստունը»)
(17.45 Մուլտֆիլմ «Օձը ձեղնահարկում»
19.00 Նորություններ
19.15 «Երալաշ»
19.45 Արծաթե սերիա. «Ավազան»
22.00 Ժամանակ
22.50 Սերիալ «Գաղտնի նյութեր»
00.30 Հոկեյ. Եվրալիգայի եզրափակիչ խաղեր «Սեսալուզա» (Մագնիտոգորսկ)-«Այսքերեն»
01.13 Մարզական նորություններ

**РТР**

9.00 Մուլտֆիլմեր «Արի տահաղաշաշ», «Արքայադուստրը եւ մարդակերը»
9.15 Կինոնկար երեխաների համար. «Ոչ մի տեղ չտանող ճանապարհ»
10.30 Մուլտֆիլմեր «Գավ անունով փիսիկը», «Ընտանեկան կրկես»
11.00 Բարի լույս, երկիր
11.45 Հեռուստախաղ «Հարյուրը մեկին»
12.30 Մեր առաջին հայացքից
13.00 Պողիում դարս
13.30 Ընտանեկան հոգսեր Նաստյա Վասլեի հետ
14.00 «Մի շաբաթ Սանտա Բարբարայում»
15.00, 21.00 Լուրեր
15.30 Իշխանության շաբաթ
16.00 Ռուսաստանի հեռուստատեսության «Երկնագույն աստղ» բաց ֆորումի դափնեկիրները
16.45 Բարեգործական երեկո «Հաղթահարման օրը»
18.00 Իմ ընտանիքը
20.00 Աշգային երաժշտական փառատոն «Աստղերի հրաժարակ-99»
21.30 Նադեժդա Բաբկինայի համերգը
01.15 «Առագաստ»
01.30 «Կ-2» կինոդահլիճ. Գ/Ֆ «Հոմերոս. աղեսպագետի ծերության դիմանկարը» (Իտալիա)

## 14 փետրվար

10.05 Առավոտ լուսո
10.15 Բարեւ
11.30 Երաժշտական ծրագիր «Նոր-տոու»
11.45 Շախմատ-64
12.00 Ջինուժ
12.30 Ստեֆան Էյզեր
13.00 Գ/Ֆ «Թատրոն»
15.15 Աշգային ռադիոյի էստրադային սիմֆոնիկ նվագախմբի ելույթը
15.30 Հեռուստաթատրոնի տեսադարանից. Ժիրայր Անանյան. «Ես եմ, եկել եմ»
17.00 Հեռուստախաղ «Ֆորս Բոյարի բանալիները»
18.15 Մուլտֆիլմ «Երեք Իվան», «Բարի ախորժակ»
18.30 9-րդ հրաալիք
19.10 Հայուհի
20.00 Խորհրդարանական ժամ
20.35. Դեսից դենից
21.00 Օրակարգ
21.35 Կիրակի
22.25 ՍՍ/2. Գ/Ֆ «Ջրհորը»

**ԱՐՄԵՆԻԱ**

11.30, 17.30 Մուլտֆիլմ
11.45 Մանկական հանրագիտարան
13.00 Գեղարվեստական ֆիլմ
14.30 Նորածնություն
14.55 Մեր հաղթը
15.20 Գեղարվեստական ֆիլմ
17.00 24 կարդ վայրկյանում
17.40 Գեղարվեստական ֆիլմ
19.20 Դարը
19.45 Դարի մեծագույն կանայք
20.10 Դուք առաջինն եք
20.35 Համերգ
22.10 Ռաի-տոու
22.50 Գեղարվեստական ֆիլմ

**2**

11.00 Սուրհանդակ (կրկնություն)
11.35 Առավոտյան մարգանիտ
12.10 Մուլտֆիլմ «Կախարդական հեքիաթ»
13.30 Ոչ նշանավոր մարդկանց կյանքը
13.45 Հրադարակ
13.55 «Մրցամարտ N 1». Մայք Թայսոն-Ֆրանցիսկ Բոսա
14.40 Գ/Ֆ «Նորից գործի մեջ»
16.05 Ի դեմ
16.30 Մուլտֆիլմ «Երեք խուզարկուներ»
17.40 Գիսաստղեր
18.00-19.00 Ընդմիջում
19.00 Գ/Ֆ «Որսացողը»
20.35 VIDEOART
20.50 Ցուցադրում է «Հայֆիլմը». գ/Ֆ «Ընկեր Փանջունի»
22.30 Յոթ քար լրատվական վերլուծական ծրագիրը
23.00 Գ/Ֆ «Քարտոն ակումբը»
01.00 Խուժան ալիք
01.20 Շաբ ու փորձանք

## 14 փետրվար

01.35 Գանձերի կղզին (VI մաս)

**1**

8.55 Գ/Ֆ «Ոսկեծամիկը»
10.30 Դիսնեյ-ակումբ. «Ջրահարսը»
11.00 Նորություններ
11.15 Դմիտրի Կոիլովի «Անլուրջ նոթեր»
11.30 Քանի դեռ բոլորը տանն են
12.05 Վաղորդյան ասող
12.55 Ծառայում եմ Ռուսաստանին
13.25 Գյուղական տեղեկատու
13.55 Բիաթլոն. Աշխարհի առաջնություն 4X7,5 կմ էստաֆետ (տղամարդկանց)
15.25 Ծիծաղի համայնատաստեր
(16.00 Նորություններ)
16.15 Ճանապարհորդների ակումբ
17.10 Ֆուտբոլային տեսություն
17.40 Դիսնեյ-ակումբ. «Թիմոնը եւ Պումբան»
18.05 Դիսնեյ-ակումբ. «Ալադինը»
18.35 Պատմության անիվը
19.25 «Երալաշ»
20.00 ՈՒՀԱ-99
22.00 Ժամանակ
22.35 Հոկեյ. Եվրալիգա եզրափակիչ
01.05 Մշակութային նորություններ
01.20 Գ/Ֆ «Ճակատագրի հարվածը»

**РТР**

9.00 Մուլտֆիլմ «Չիչիկովի արկածները»
9.30 Ծառայում եմ հայրենիքին
10.00 Մուլտֆիլմ «Ալի-Բաբան եւ 40 ավազակները»
10.30 PTP-ի փոստը
11.00 Բարի լույս, երկիր
11.30 Ինքդ քեզ օգնիր
12.05 «Անելազը» եւ ընկ.
13.00 Ռուսական լոտո
13.40 Գրքերի աշխարհը Լեոնիդ Կուրավլյովի հետ
14.00 «Մի շաբաթ Սանտա Բարբարայում»
15.00 Լուրեր
15.30 Դաշնություն
16.10 խորհրդարանական ժամ
17.10 Սերիալ «Օգնիր եւ կարգ»
18.00 Երկխոսություններ կենդանիների մասին
19.00 Հին բնակարան, 1948-58 թթ. (1-ին մաս)
20.00 Հույժ գաղտնի
21.00 Հայելի
22.00 Գ/Ֆ «Մուրոմյան ճանապարհին...»
23.40 Կ-2-ը ներկայացնում է
00.35 Հերթապահ բաժանմունք
01.00 Շայներիզ

## 15 փետրվար

02.30 Սուրհանդակ

**1**

16.00 Նորություններ
16.15 Սերիալ «Սինդբադի նոր արկածները»
16.40 Մուլտֆիլմ. «Երջանիկ Գրիգորին»
16.55 Աստղային ժամ
17.35 Սինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Դաժան հրեասակը»
19.00 Նորություններ
19.15 Այդ հետաքրքրաշարժ կենդանիները
19.45 Այստեղ եւ հիմա
20.05 Վ. Պոզների «Մենք» ծրագիրը
20.45 Սերիալ «Հավերժական կանչ»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 Ժամանակ
22.50 Գ/Ֆ «Լեոնցին III»
00.35 Հայացք
01.20 Օրվա նորություն
01.35 Գ/Ֆ «Գրաչները»

**РТР**

8.00, 10.30, 10.45 Բարի լույս, Ռուսաստան
10.15 Հերթապահ բաժանմունք
10.35 Հեռուստախաղ «Հաղորդումների ծրագիր»
10.50 Սպորտներ փոստով
11.00 «Սանտա Բարբարա»
11.45 Երաժշտություն, երաժշտություն...
12.00, 15.00, 18.00, 21.00, 01.45 Լուրեր
12.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիների հանգուցալուծումը»
13.30 Հայելի
14.30 Խանութ բազմոցի վրա
15.30 Սերիալ «Վենետիկը ծմակը»
16.25 Սերիալ «Հարուստներն ու նշանավորները»
17.15 Մուլտֆիլմեր «Տարաշխարհիկը կաղամբի մեջ», «Արծագանք»
17.25 Սերիալ «Առաջին համբույրներ»
18.35 Ավտոմոտորս. ծմեռային օրակարգ
19.30 Սերիալ «Ռուսի սեզոն»
20.30 Կրկնակի դիմանկար
21.40 Մանրամասներ
21.55 Մեր առաջին հայացքից
22.30 Կինոյի ժամ. Գ/Ֆ «Ոչ մի անձնական բան» (ԱՄՆ)
00.10 Համերգ. նվիրված Աֆղանստանից սովետական զորքերի սահմանափակ համակազմի դուրս հանման 10-ամյակին
02.20 Հերթապահ բաժանմունք


«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ INTERNET ՑԱՆՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ http://spyur.acc.am, http://www.arminco.com/spyur •ԱՄՆ-ում՝ http://armscape.com/spyur •ԱՎՍՏՐԱԼԻԱՅՈՒՄ՝ http://armscape.nareg.com.au/spyur


«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան, Երեւան-23, Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 095 Տպաքանակը՝ 4000 Ստորագրված է տպագրության՝ 12. 02. 1999 Գինը՝ 100 դրամ

digitised by A.R.A.R.@